



ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱԺԻՆ

Հաստատված է ավագանու N _____ նիստով

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Ի՞նչ է եռամյա ծրագիրը	
	Ներածություն	
1.	Համայնքի իրավիճակի գնահատում	
2.	Հանրապետական և մարզային ծրագրերով նախատեսվող, համայնքին առընչվող իրականացվելիք միջոցառումների ներկայացում և գնահատում	
3.	Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները	
4.	Համայնքի սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները, ըստ առանձին բնագավառների նպատակների առաջադրում և առաջնահերթ խնդիրների ձևակերպում	
4.1.	Տարածքային զարգացում և քաղաքաշինություն	
4.2.	Բնակարանային - կոմունալ տնտեսություն	
4.2.1.	Բնակելի և ոչ բնակելի ֆոնդերի շահագործում և վերանորոգում	
4.2.2.	Բնակչության կոմունալ - կենցաղային պայմանների բարելավում	
4.2.3.	Աղբահանություն և փողոցների մաքրում	
4.2.4.	Կանաչ տարածքների խնամք և ոռոգում	
4.2.5.	Արտաքին լուսավորություն	
4.2.6.	Թափառող կենդանիների վնասազերծման միջոցառումներ	
4.3.	Ճանապարհային տնտեսություն	
4.4.	Գյուղատնտեսություն և շրջակա միջավայրի պահպանություն	
4.5.	Առևտուր և սպասարկումներ	
4.6.	Կրթություն	
4.6.1.	Մանկական նախադպրոցական հիմնարկներ	
4.6.2.	Արտադպրոցական հիմնարկներ	
4.7.	Մշակույթ	
4.7.1.	Երաժշտական, արվեստի և գեղագիտական դպրոցներ	
4.7.2.	Մշակույթի տներ	
4.7.3.	Գրադարաններ	
4.8.	Առողջապահություն, մարմնակրթություն և սպորտ	
4.9.	Աջակցություն ՏԻ բնագավառի հասարակական կազմակերպություններին	
4.10.	Աշխատանք և սոցիալական ծառայություն	
4.11.	Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ	
4.12.	Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանություն	
4.13.	Արտակարգ իրավիճակներ և քաղաքացիական պաշտպանություն	
5.	Համայնքի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում	
6.	Ըստ առանձին բնագավառների նախատեսվող ծրագրերի, միջոցառումների և աշխատանքների համառոտ ամփոփագիր	
7.	Համայնքի զարգացման եռամյա ծրագրի հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշների գնահատում և կանխատեսում	
	Եզրափակում	
	Հավելված 1. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը	
	Հավելված 2. Համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը	

ԻՆՉ Է ԵՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Եռամյա ծրագիրն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի գնահատման և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աջափնյակ համայնքի 2003-2005թթ. սոցիալ-տնտեսական զարգացման եռամյա ծրագիրը մշակվել է՝ հիմք ունենալով համայնքի ղեկավարի և նորընտիր ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ ունենալով բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

Գալիք երեք տարում համայնքի զարգացման ծրագրային հիմնական ուղղություններն են՝

- պաշտպանել համայնքի բնակչության և տնտեսավարող սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերը,
- բարելավել համայնքի բնակչության կոմունալ-կենցաղային պայմանները,
- ապահովել համայնքի բնակելի շենքերի և այլ շինությունների պահպանումը, շահագործումը և նորոգումը,
- կապիտալ ներդրումներ կատարել բնակարանային-կոմունալ տնտեսության և բարեկարգման բնագավառում,
- համայնքի տարածքում ստեղծել նոր աշխատատեղեր, զարգացնելով փոքր և միջին բիզնեսը, գյուղատնտեսությունը,
- հատուկ ուշադրություն դարձնել կրթության, մշակույթի և մարզական օջախների ռացիոնալացմանը և նպատակային գործունեությանը,
- միջոցներ ձեռնարկել համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ,
- բարելավել համայնքի ֆինանսական կացությունը՝ համագործակցելով հարկային մարմինների հետ և իրականացնելով հարկային և ոչ հարկային եկամուտների, տեղական տուրքերի և վճարների սահմանման և զանձման ճկուն քաղաքականություն,
- նպատակային օգտագործել համայնքային բյուջեի միջոցները՝ բարձրացնելով բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակը և որակը, թաղապետարանի և նրա ենթակայության կազմակերպությունների և ձեռնարկությունների աշխատանքի արդյունավետությունը:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Աշխարհագրական դիրքը. Աջափնյակ թաղային համայնքը զբաղեցնում է Երևանի նախկին Մաշտոցի շրջանի տարածքի հիմնական մասը, առանց Դավիթաշենի 4 զանգվածների և գյուղի: Աջափնյակը Երևան քաղաքի հյուսիս-արևմտյան թաղային համայնքն է, զգալիորեն տարբերվում և սոցիալ-տնտեսական զարգացմամբ առայժմ հետ է մնում բուն Երևանից: Թաղամասը, սկսելով կազմավորվել 1950-ական թվականներից, ունի ընդամենը կեսդարյա պատմություն:

Աջափնյակը զբաղեցնում է մոտ 2568 հա տարածք, որից 869 հա կազմում է բնակարանային ֆոնդը, 441 հա՝ արդյունաբերական համալիրը, 80 հա՝ գերատեսչական հիմնարկները, 852 հա՝ գյուղատնտեսական նշանակության հողերը, 122 հա՝ հանգստի գոտիները, 10 հա՝ ջրային ֆոնդերը, 194 հա՝ այլ հողեր:

Ժողովրդագրություն. Համայնքի բնակչությունը 01.01.2003թ. դրությամբ մոտ 126,0 հազ. մարդ է , այդ թվում՝ մոտ 2,0 հազ. փախստականներ: Աշխատունակ բնակչության թիվը կազմում է մոտ 54,2 հազ. մարդ (ամբողջ բնակչության 43,0 %-ը), որից զբաղվածների թիվը կազմում է

մոտ 41,6 հազ. մարդ (ամբողջ բնակչության 33,0%-ը), աշխատանք փնտրողներ՝ 7112 մարդ, զբաղվածության կենտրոնում գրանցված գործազուրկներ՝ 6442 մարդ, նպաստառու գործազուրկներ՝ 441 մարդ:

Գործազուրկների մեծամասնությունը կանայք են և նկատվում է նրանց թվի հետագա աճի միտում: Աշխատունակ տարիքի կանանց մոտ 60 %-ից ավելին ունեն դպրոցական կամ նախադպրոցական տարիքի երեխաներ, որոնց ընդհանուր թիվը կազմում է 38,1 հազ մարդ (ամբողջ բնակչության 30,3 %-ը): Թոշակառուների ընդհանուր թիվը համայնքում կազմում է 22,7 հազ. մարդ (ամբողջ բնակչության 18%-ը), որոնցից 13,9 հազարը ծերության կենսաթոշակառուներ են, 2950-ը՝ պատերազմի և աշխատանքի վետերաններ, 698-ը՝ Ղարաբաղի պատերազմի մասնակիցներ, 2851-ը՝ հաշմանդամներ, 1644-ը՝ միայնակներ, 2016-ը՝ ծնողազուրկ երեխաներ, այդ թվում 19-ը՝ երկկողմանի ծնողազուրկ: «Փարոս» համակարգում ընտանեկան նպաստ են ստանում 3856 ընտանիք:

Վերջին տարիներին նկատվում է 65 տարեկանից բարձր բնակչության և երեխաների թվի նվազում: Դրա հետ մեկտեղ, վերջին տարիների ընթացքում կտրուկ աճել է ընտանիքներով, երկարաժամկետ արտագնա աշխատանքների մեկնողների թիվը, ինչը հնարավորություն չի տալիս համայնքի ազգաբնակչության քանակական փոփոխության և, ընդհանրապես, դեմոգրաֆիկ վիճակագրության ամբողջական պատկերը ներկայացնելու: Այն վերջնական տեսքի կբերվի 2001թ. հոկտեմբերին անցկացված մարդահամարի արդյունքների ամփոփումից հետո:

Համայնքի ձեռնարկությունները. Համայնքի տարածքում գործում են հանրապետական նշանակության 5 հիվանդանոցներ՝ 1150 մահճակալով, «Դիագնոստիկա» բաժնետիրական ընկերությունը, 2 ամբուլատոր պոլիկլինիկաներ, 20 հանրակրթական դպրոցներ՝ 13761 աշակերտով, 4 գիտահետազոտական ինստիտուտներ, 21 արդյունաբերական, 6 շինարարական, 1 տրանսպորտային, 3 գյուղատնտեսական ձեռնարկություններ, 3 կապի հանգույցներ (34, 35, 39 ԱՅԿ-ներ) և հավասարաչափ բաշխված առևտրի և սպասարկումների 353 փոքր և միջին օբյեկտներ:

Աջափնյակում գրանցված են մոտ 1300 արտադրական և ոչ արտադրական մասնավոր ձեռնարկություններ և անհատ ձեռներեցներ: Վերջին 10 տարիների ընթացքում համայնքի արդյունաբերությունը անկում է ապրել, ընդլայնվել է առևտրային գործունեությունը:

Տեղական ինքնակառավարման մարմինները. Աջափնյակ թաղային համայնքի ավագանին ընտրվել է 2002թ. հոկտեմբերին, բաղկացած է 15 անդամից: Աջափնյակի թաղապետն ընտրվել է 2000թ. դեկտեմբերին, նրա աշխատակազմը բաղկացած է 67 հաստիքից հետևյալ կառուցվածքով (տես հավելված 2)՝ թաղապետի տեղակալ, խորհրդական, օգնական, աշխատակազմի քարտուղար, իրավաբանական բաժին (2), քարտուղարություն և լրատվության բաժին (7), ֆինանսական բաժին (11), սոցիալ-տնտեսական ծրագրերի և արտաքին կապերի բաժին (4), ճարտարապետության և քաղաքաշինության բաժին (5), կոմունալ տնտեսության, բարեկարգման և բնակելի ֆոնդերի սպասարկման բաժին (10), գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության բաժին (4), կրթության, մշակույթի և սպորտի բաժին (7), առևտրի և սպասարկումների բաժին (7), վերահսկողության և գույքի կառավարման բաժին (2), համատիրությունների կորրոկցիայի և վերահսկողության բաժին (2), վարչա-տնտեսական բաժին (2):

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ֆիզիկական վիճակը.

Աջափնյակ թաղային համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 13.03.97թ. թիվ 42 որոշմամբ և բերված է հավելված 1-ում:

Վերջին տարիներին տնտեսական անկման հետևանքով համայնքի գույքի ֆիզիկական վիճակը վատթարացել է: Առավել վատ վիճակում են գտնվում կոնունալ տնտեսության ցանցերը (ջրնուղ՝ 221,7 գկմ, կոյուղի՝ 92,6 գկմ, ոռոգում՝ 14,5 գկմ, ջեռուցում՝ 40 գկմ, գազամատակարարում՝ 42,9 գկմ): Ջեռուցման համակարգն արդեն 11 տարի չի գործում, գազամատակարարումը վերականգնվում է համայնքի առայժմ միայն սեփական տներում:

Համայնքի տարածքում քաղաքային նշանակության ճանապարհային ցանցի երկարությունը մոտ 16,34 կմ է, մակերեսը՝ 370 հազար քմ, համայնքային նշանակության ճանապարհային ցանցի երկարությունը՝ 39,231 կմ, մակերեսը՝ 613,25 հազ. քմ: Գնապարհային ցանցի ընդլայնման և բարեկարգման պահանջ կա:

Շրջակա միջավայրի պահպանություն.

Համայնքում գործում է խմելու ջրի ջրամատակարարման և կոյուղու կենտրոնացված համակարգ: Այս ծառայությունների սպասարկման անբավարար մակարդակը հետևանք է տնտեսական ճգնաժամի և ջրամատակարարման ցանցի մաշվածության: Ջրնուղի և կոյուղու խողովակների մաշվածության պատճառով կեղտաջրերը կարող են թափանցել ջրամատակարարման համակարգ, հարուցելով աղիքային հիվանդություններ:

Խմելու ջրի մատակարարումը կատարվում է ընդհատումներով, ջրի օրական միջին ծախսը մեկ շնչի հաշվով վերջին տարիների ընթացքում անընդհատ նվազում է:

Համայնքի 148 բարձրահարկ շենքերում կենցաղային աղբը կուտակվում է այդ շենքերի 207 մուտքերի աղբախցերում, իսկ մնացած շենքերի կենցաղային աղբը կուտակվում է համայնքի տարածքում հավասարաչափ տեղադրված 220 աղբարկղների մեջ: Կուտակված աղբը ամեն օր սահմանված գրաֆիկով «Աջափնյակի սանմաքրում» ՍՊԸ-ան աղբատար ավտոմեքենաներով տեղափոխվում է համայնքի ծայրամասում գտնվող բացօթյա աղբավայր՝ «Ցիտա» գործարանին հարող տարածքում, և վնասազերծվում:

Աղբահանությունը տարեկան կազմում է 33,5 հազ. տոննա, այդ թվում բնակ-չությունից՝ 26,0 հազ. տոննա: Մաքրման ենթակա ընդհանուր տարածքը 64,8 հա է, այդ թվում 43,4 հա՝ քաղաքային նշանակության 11 փողոցներ, 21,4 հա՝ համայնքային նշանակության 37 փողոցներ և այլ տարածքներ: Սանմաքրման աշխատանքները կատարվում են ամեն օր, մեքենայացված և ձեռքի միջոցով:

Համայնքի «Աջափնյակի սանմաքրում» ՍՊԸ-ան առկա մեքենայական պարկը կազմում է 24 միավոր մեքենա-մեխանիզմ, որոնցից շահագործման համար պիտանի են 20-ը, այդ թվում՝

7(5) միավոր - մասնագիտացված հատուկ աղբատարներ

8(8) -//- - ինքնաթափ,բեռնատար

3(2) -//- -ջրցան- լվացող

1(1) -//- - աղ-ավազ ցանող

1(1) -//- - վառելիքատար ցիստեռն

1(0) -//- - մայթ մաքրող տրակտոր

1(1) -//- -ձնամաքրիչ, ձյուն բարձող

2(2) -//- - մարդատար ավտոմեքենա:

Ամբողջ շարժակազմը ժամկետանց է, գտնվում է բարոյապես և ֆիզիկապես մաշված վիճակում, կարիք է զգում թարմացման և վերանորոգման:

Նորոգման կարիք է զգում նաև փողոցներում և բակերում տեղադրված 220 աղբարկղներից մեծ մասը:

Համայնքի կանաչապատման «Արսերմի» ՍՊԸ-ան կողմից սպասարկվում է 39 հա տարածք, այդ թվում 24 հա՝ քաղաքային նշանակության, 15 հա՝ համայնքային նշանակության: Համայնքային նշանակության կանաչ տարածքներում առկա են 8650 ծառ և 8020 թուփ, քաղաքային նշանակության կանաչ տարածքներում՝ 12800 ծառ և 8120 թուփ: Ոռոգման ջրագծերի ընդհանուր երկարությունը կազմում է 14500 գծմ., այդ թվում համայնքային նշանակության տարածքներում՝ 4760 գծմ., քաղաքային նշանակության տարածքներում՝ 9740 գծմ: Այս բնագավառում կանաչ տարածքների ընդլայնման և ոռոգման ջրագծերի հիմնական վերանորոգման աշխատանքների պահանջ կա:

Բնակելի և ոչ բնակելի ֆոնդերի շահագործում.

Երևանի վթարային շենքերի հիմնական մասը գտնվում է Աջափնյակում: Համայնքն ունի 411 բնակելի շենք, որոնցից 127-ը վթարային են, այդ թվում 27-ը՝ 4-րդ կարգի, 27-ը՝ 3-րդ կարգի, 73-ը՝ 2-րդ կարգի: Վաղուց հասունացել է վթարային շենքերի գնահատման, ամրացման, վերանորոգման կամ քանդման աշխատանքները սկսելու անհրաժեշտությունը, հատկապես 4-րդ կարգի վթարային շենքերը հրատապ լուծում են պահանջում:

Համայնքի 411 բնակելի շենքերից 129-ը սպասարկվում է համայնքային ենթակառուցվածքային « Աջափնյակի Շ և ՇՇ» ՓԲԸ կողմից, որը դատարանի վճիռով սնանկ է ճանաչվել հարկային և կենսաթոշակային պարտքերի պատճառով, 249-ը հանձնված է 52 համատիրություններին, 33-ը կոոպերատիվ շենքեր են: Համայնքի 411 բնակելի շենքերից 148-ը բարձրահարկ են (9-16 հարկանի), որոնցից 65-ը սպասարկում է «Աջափնյակի Շ և ՇՇ» ՓԲԸ-ը, 57-ը՝ համատիրությունները, 26-ը՝ կոոպերատիվները:

Միևնույն ժամանակ, համայնքն ունի անավարտ, մինչև 30%-ով կառուցված տասնյակ բնակելի շենքեր, որոնք հիմնականում տեղաբաշխված են Նորաշեն և Հյուսիս-Արևմտյան Գ-3 թաղամասերում:

Համայնքի բնակֆոնդի ընդհանուր մակերեսը 1271 հազ. քմ է, որից 926,9 հազ. քմ-ը՝ բնակելի մակերես, 18717 բնակարաններից մոտ 90%-ը սեփականաշնորհված են, մոտ 10% -ը՝ առայժմ համայնքային, մաքրվող բակային տարածքը՝ 980,0 հազ. քմ:

Համատիրությունների գործունեության կազմակերպումը հատկապես դժվար է ընթանում վթարային շենքերում, որտեղ պահանջվում են մեծ սկզբնական ծախսեր, որն էլ պատճառ է հանդիսանում բնակչությանը խուսափելու կազմակերպչի դերը ստանձնելուց: Փորձը ցույց է տալիս, որ գործող համատիրություններում շենքերի ֆիզիկական վիճակը հիմնականում չի բարելավվել, քանի որ բնակչությունից զանձվող սպասարկման վարձը բավականացնում է միայն համատիրության ադմինիստրացիայի աշխատավարձին, աղբահանությունը կատարվում է ընդհատումներով, այս ամենը ի վերջո հանգեցնում է բնակչության արդարացի դժգոհությանը:

Համայնքի 148 բարձրահարկ շենքերում կան 300 վերելակներ, որոնցից 107-ը չեն աշխատում, այդ թվում 34-ը թալանված են, 29-ի էլեկտրական շարժիչները չեն գործում, 44-ը կապիտալ վերանորոգման կարիք ունեն: Մնացած 193 վերելակները ենթակա են ընթացիկ վերանորոգման:

Համայնքի տարածքում հաշվառված են մոտ 5000 օրինական և մոտ 200 ինքնակամ կառուցված ավտոտնակներ, 297 ոչ բնակելի տարածքներ՝ 33,95 հազ. քառ.մ ընդհանուր տարածքով:

Բնակարանային պայմանների բարելավման նպատակով թաղապետարանում հերթագրված են 750 քաղաքացի, որոնցից 297-ը ունեն առաջնահերթության իրավունք, 72-ը ազատամարտիկների ընտանիքներ են:

Բնակֆոնդի շահագործումն ու պահպանումը, համայնքի ներկայիս ֆինանսական սուղ պայմաններում, լուրջ խնդիր է հանդիսանում, գոնե մասնակիորեն այն լուծելու համար: Համայնքի բնակելի շենքերի շահագործումը, բակային տարածքների բարեկարգումը անմիջականորեն

կապված են բնակչության բնակապասարկման վարձավճարների հավաքագրման մակարդակի հետ, համայնքում այն կազմում է 25-30%:

Կրթություն, մշակույթ և սպորտ. Համայնքում գործում են 16 նախադպրոցական հիմնարկներ, 1 գիշերօթիկ կրթահամալիր, 1 արտադպրոցական հիմնարկ՝ մանկապատանեկան տեխնիկական ստեղծագործության կենտրոն, 3 երաժշտական դպրոցներ, 1 գեղարվեստի դպրոց, 1 ակումբ, 1 գեղագիտական դաստիարակության կենտրոն, 1 գրադարանային կենտրոնացված համակարգ (3 մասնաճյուղ), 1 մանկապատանեկան մարզադպրոց, 1 կամերային նվագախումբ: Նախադպրոցական հիմնարկներում գործում են 129 խմբեր՝ 2450 երեխա հաճախելիությամբ, 785 աշխատողներով: Համայնքի նախադպրոցական և արտադպրոցական հիմնարկները հիմնականում ապահովված են մասնագիտական կադրերով, որոնց շնորհիվ հաջողվել է պահպանել այդ հիմնարկների աշխատանքային ռիթմը: Մանկապարտեզները ապահովված են տիպային շենքերով, ջրով, էլեկտրաէներգիայով, պարբերաբար կատարվում է աղբահանություն:

Համայնքի թթ. 108,188,198 մանկապարտեզները ընդգրկված են ամերիկյան «Վորլդ վիժեն» կազմակերպության «Քայլ առ քայլ» կրթադաստիարակչական ծրագրում:

Համայնքի ՄՊՍԿ-ն տեղավորված է թիվ 155 միջնակարգ դպրոցի շենքում, գործում են հիմնականում տեխնիկական 43 խմբեր՝ 320 երեխաներով և 21 աշխատողներով:

«Մանկապարտեզ-դպրոց» գիշերօթիկ կրթահամալիրում հիմնականում ընդգրկված են սոցիալապես անապահով ընտանիքների ծնողազուրկ երեխաներ, գործում են մանկապարտեզի 6 խմբեր՝ 115 երեխա, դպրոցի 3 առաջին դասարաններ՝ 46 աշակերտ, ընդամենը՝ 69 աշխատողներով: Կրթահամալիրի շենքը հարմարեցված է, զգացվում է հիմնական վերանորոգման և գույքի ձեռքբերման խիստ կարիք:

Թիվ 5 երաժշտական դպրոցը (459 երեխա, 94 աշխատող) գործում է թիվ 188 միջնակարգ դպրոցի առանձին մասնաշենքում՝ բավարար պայմաններով, թիվ 12 երաժշտական դպրոցը (370 երեխա, 80 աշխատող)՝ թիվ 118 միջնակարգ դպրոցի առանձին մասնաշենքի առաջին և կիսանկուղային հարկերում, որի տարածքը բավարար չէ, խոնավ է, զգացվում է վերանորոգման խիստ կարիք, թիվ 21 երաժշտական դպրոցը (145 երեխա, 41 աշխատող)՝ թիվ 94 միջնակարգ դպրոցի առանձին մասնաշենքում՝ բավարար պայմաններով:

Երաժշտական դպրոցներում գործում են դաշնամուրի, լարային, փողային և ժողգործիքների բաժիններ:

Համայնքի գեղարվեստի դպրոցում գործում է «Ձարթոնք» մանկական պարային համույթը, որը տեղավորված է թիվ 195 միջնակարգ դպրոցի տարածքում: Համույթում ընդգրկված են 310 երեխաներ և 27 աշխատողներ:

Համայնքի գրադարանային կենտրոնացված համակարգը (3 մասնաճյուղով) տեղավորված է հարմարեցված շենքում, գրքային ֆոնդը՝ 21000 գիրք, աշխատողների թիվը՝ 61:

Նախկին թիվ 110 մանկապարտեզի վերակազմակերպմամբ համայնքում հիմնվել է «Աջափնյակ» գեղագիտական դաստիարակության կենտրոնը, որի շենքի հիմնական վերանորոգման և տարածքի բարեկարգման աշխատանքները իրականացվել են «Փրկեք երեխաներին» միջազգային կազմակերպության հետ համագործակցությամբ: Կենտրոնում բացվել են մարզա-մշակութային, տեխնիկական և գեղարվեստական 16 բաժիններ, որոնցում գործում են 40 խմբեր՝ 490 երեխաներով և 59 աշխատողներով:

Համայնքում գործող Սիլիկյան թաղամասի ակումբի, մարզադպրոցի շենքային հնարավորությունները չեն բավարարում համայնքի բնակիչների մշակութային և մարզական պահանջները: Սարգադպրոցում գործում են 17

խմբեր (բասկետբոլ, ձեռքի գնդակ, սեղանի թենիս, շախմատ և այլն)՝ 390 երեխա, 25 աշխատող: Տարածքի բացակայության պատճառով մարզադպրոցի պարապմունքները անցկացվում են հանրակրթական դպրոցների մարզադահլիճներում:

Գյուղատնտեսություն. Աշափնյակի գյուղատնտեսական նշանակության հողերը զբաղեցնում են համայնքի արևմտյան մասը, ձգվում են հյուսիսից հարավ, տարածվում են կիսաանապատային գորշ և բաց շագանակագույն հողերի գոտում: Գտնվելով չոր կլիմայական գոտում և բնական թեքությունների վրա, բնականից աղքատ լինելով հումուսով, 1-2 տարի չմշակվելու դեպքում նրանք շատ արագ ենթարկվում են կլիմայական գործոնների ազդեցությանը և շարքից դուրս են գալիս:

Համայնքում առկա 852 հա գյուղատնտեսական նշանակության հողերից 329 հա-ը գնահատված է, գտնվում է գործող ոռոգման ցանցի տակ և վարձակալական հիմունքներով հատկացված է 552 վարձակալների, 203 հա-ը՝ Սիլիկյան թաղամասում տարբեր կատեգորիաների վարելահողեր և խոպանացված տարածքներ, գնահատված չէ և ոռոգման ցանցի բացակայության պատճառով վարձակալության տրված չէ, 320 հա-ը արոտներ և գյուղատնտեսության համար ոչ պիտանի հողեր են:

Ներկայումս խաղողի և պտղատու այգիները ծերացել են, ժամանակին չստանալով ագրոտեխնիկական միջոցառումներ (ոռոգում, բուժում, պարարտացում, երիտասարդացում, լրացում և այլն), կորցրել են իրենց կենսունակությունը, նվազել է 1 հա-ի հաշվով միջին բերքատվությունը:

Ոռոգման ջրի մատակարարը «Ոռոգում» ՊՓԲԸ Երևանի մասնաճյուղն է, որի հետ համատեղ կազմակերպվում է հողերի վարձակալներին ոռոգման ջրով ապահովելու հարցը:

Առևտուր և սպասարկումներ. Համայնքի տարածքում գործում են առևտրի և սպասարկումների 375 փոքր և միջին օբյեկտներ, այդ թվում առևտրի մանր կրպակներ՝ 350, բենզինի լիցքավորման կետեր՝ 18 (13 ստացիոնար և 5 կրպակ), գազի լիցքավորման կետեր՝ 7 (2 ստացիոնար և 5 շարժական): Հիմնականում կարգավորված են այդ օբյեկտների տեղաբաշխման և արտաքին համաչափության հարցերը, պարբերաբար ստուգումներ են կատարվում տեղի թույլտվությունը, բյուջե կատարած մուծումները և կրպակների չափերի համապատասխանությունը նախագծին պարզելու նպատակով: Ներկայումս համայնքի բյուջեի սեփական եկամուտների զգալի մասը գոյանում է առևտրի և սպասարկումների օբյեկտներից գանձվող տեղական տուրքերից և նրանց զբաղեցրած հողի վարձավճարներից:

Արտակարգ իրավիճակներ և քաղաքացիական պաշտպանություն.

Համայնքում գործում են 2 քիմիական վտանգավոր օբյեկտներ՝ «Երևան կաթ» ՍՊԸ (օգտագործվում է 1,5 տ ամոնիակ) և «Ագրոսպասարկում» ԲԲԸ (օգտագործում է 280 կգ ամոնիակ), որոնց հնարավոր վթարի դեպքում համայնքի մի հատվածը կարող է հայտնվել քիմիական վարակման գոտում:

Հրդեհապայթումավտանգ օբյեկտներ են բենզալիցքավորման 18 ստացիոնար և գազալիցքավորման 7 շարժական կետերը:

Համայնքի խմելու ջուրը մատակարարվում է երկու ջրատարներով՝ Ապարանից 1000 լ/վրկ և Շարշուրից 400 լ/վրկ հզորությամբ: Համայնքում գործում են 5 կարգավորող ստորգետնյա հերմետիկ ջրավազաններ՝ 54 հազ խոր.մ ընդհանուր տարողությամբ: Համայնքի կոյուղու ցանցը միավորված է օդահագեցված կայանին: Ջրամատակարարման և կոյուղու ցանցի մաշվածության պատճառով առաջացող վթարները կարող են առաջ բերել համաճարակներ և հիվանդություններ:

Համայնքի գազամատակարարումը կատարվում է 160 կմ երկարությամբ գազատարների միջոցով, այդ թվում ստորգետնյա՝ 70 կմ (ցածր ճնշման՝ 40կմ,

միջին ճնշման՝ 30 կմ), վերգետնյա՝ 90 կմ (ցածր ճնշման՝ 68 կմ, միջին ճնշման՝ 9 կմ, բարձր ճնշման՝ 13 կմ): Ներկա դրությամբ գործող գազատարների երկարությունը կազմում է 42,9 կմ, այդ թվում ստորգետնյա՝ 11,3 կմ (ցածր ճնշման՝ 0,5 կմ, միջին ճնշման՝ 10,8 կմ), վերգետնյա՝ 31,6 կմ (ցածր ճնշման՝ 22,3 կմ, միջին ճնշման՝ 9,3 կմ): Գազի մատակարարման կարգավորման համար համայնքում կա 5 գազաբաշխիչ կայաններ:

Համայնքի էլեկտրամատակարարումը իրականացվում է 35 կՎ երկու օղային գծով (200-ական մետր երկարությամբ) և 35 կՎ չորս կաբելային գծով (երկուական 2254 մ և 1547 մ երկարությամբ): Բարձր լարման հոսանքը ապահովվում է համայնքի տարածքում տեղադրված 155 տրանսֆորմատորային ենթակայանների միջոցով:

Համայնքն ունի 17 ապաստարան՝ 8714 մարդ տարողությամբ, որոնցից բարվոք վիճակում են 11-ը, սակայն ինժեներա-տեխնիկական գործող նորմաներին չեն համապատասխանում ոչ մեկը: Բնակչության պատսպարման համար օգտագործվում են նաև բնակելի շենքերի և սեփական տների նկուղները: Որպես պահեստային կառավարման կետ ընտրված է Երֆի ապաստարանը, որը կարիք ունի վերանորոգման և ժամանակակից տեխնիկայով հագեցման:

Բնակչության ազդարարման համար համայնքում առկա են U-40 տիպի 12 էլեկտրաշչակներ, այդ թվում աշխատող՝ 3, անսարք՝ 7, թալանված՝ 2:

Աղետների ժամանակ բնակչության տարահանման համար ստեղծված են 16 տարահանման հավաքակայաններ, որոնք տեղակայված են հիմնականում հանրակրթական դպրոցներում:

Համայնքի 7 կիսակառույց բնակելի շենքերը մթնոլորտային ազդեցությունների տակ քայքայվում են, որի հետևանքով դրանք բնակչության համար հանդիսանում են վտանգավոր շինություններ:

Համայնքի տարածքում տեղակայված են 12 վերամբարձ կռունկներ, որոնք հիմնականում թալանված են, գտնվում են վթարային վիճակում և վտանգ են ներկայացնում բնակչության համար:

Համայնքի տարածքում առկա են 32 թեքված և փտած էլեկտրահաղորդման հենասյուներ, մոտ 30 ընկնելու ենթակա բարդի տիպի ծառեր, որոնց մի մասը գտնվում է բնակելի շենքերին շատ մոտ և խարխուլում է շենքերի հիմքերը և կոմունիկացիաները:

Համայնքի հիմնական ուժեղ կողմերը

- Համայնքի աշխարհագրական դիրքը բարենպաստ է հեռանկարային զարգացման համար
- Համայնքն ունի գիտա -արտադրական մեծ պոտենցիալ
- Համայնքն ունի գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական նշանակության պահուստային հողեր, որոնք կարող են հատկացվել բնակչությանը ինչպես գյուղատնտեսական, այնպես էլ տնաշինական և գործունեություն ծավալելու նպատակներով
- Համայնքում հիմնականում պահպանվել են նախադպրոցական հիմնարկների տիպային շենքերը
- Համայնքում հիմնվել է «Աջափնյակ» գեղագիտական դաստիարակության ժամանակակից կենտրոն, որի շենքը կապիտալ վերանորոգվել է, տարածքը՝ բարեկարգվել
- Համայնքում ակտիվացել է առևտրային գործունեությունը

Համայնքի հիմնական բարենպաստ փոփոխությունները և հնարավորությունները

- Համայնքում նկատվում է ֆինանսական կայունություն, աստիճանաբար մարվում են նախորդ տարիներին գոյացած համայնքային պարտքերը
- ՏԻ հնարավորություն է տալիս մշակել համայնքի զարգացման հեռանկարային ծրագրեր և հասնել ֆինանսական անկախության
- ՏԻ գործող համակարգը թույլ է տալիս անընդհատ վերանայել ու կատարելագործել համայնքի ղեկավարի աշխատակազմի և նրա ենթակայության կազմակերպությունների կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, կադրերի ընտրությունը
- «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ նոր օրենքի ընդունմամբ ընդլայնվել են ՏԻՄ-երի լիազորությունները, գործառույթները ըստ բնագավառների և համայնքի բյուջեի եկամուտների աղբյուրները
- Համայնքի ղեկավարը և նորընտիր ավագանին վայելում են բնակչության մեծամասնության վստահությունը

Համայնքի հիմնական թույլ կողմերը

- Համայնքում առկա են մեծ քանակությամբ վթարային բնակելի շենքեր
- Վերջին 10 տարիներին համայնքում բնակարանային շինարարության բնագավառում պետական միջոցներ ընդհանրապես չեն հատկացվում, իսկ համայնքի տարածքում կիսակառույց բնակելի շենքերը մատնված են բացարձակ անուշադրության
- Անմխիթար վիճակում են գտնվում համայնքի կոմունալ տնտեսության (ջրամատակարարման և ջրահեռացման, ջեռուցման, ոռոգման, գազամատակարարման) ցանցերը, ճանապարհային տնտեսության որոշ մասը
- Կապիտալ վերանորոգման և բարեկարգման կարիք են զգում համայնքի կրթության, մշակույթի և սպորտի բնագավառի կազմակերպությունների շենքերն ու շինությունները, բակային տարածքները
- Թույլ է թաղապետարանի և նրա ենթակա կառույցների նյութատեխնիկական բազան, նրա հզորացումը պահանջում է ֆինանսական խոշոր միջոցների ներդրում
- Համայնքի տարածքում բացակայում է ինչպես գյուղատնտեսական մթերքների շուկա, այնպես էլ առևտրա-արդյունաբերական ապրանքների տոնավաճառ
- Համայնքում կազմակերպված բնույթ չի կրում գյուղատնտեսական անհատական տնտեսություններին ոռոգման ջրի մատակարարումը և արտադրված գյուղատնտեսական մթերքների իրացումը, որոնց կարիքը զգացվում է
- Նախորդ 10 տարիների ընդհանուր տնտեսական ճգնաժամի պատճառով համայնքում ավելացել է գործազուրկների քանակը, առկա է նաև թաքնված գործազրկության խնդիրը
- Համայնքում մեծ թիվ են կազմում սոցիալապես անապահով ընտանիքները, միայնակ թոշակառուները, ցածր եկամուտ ունեցողները
- Ղեռես վերջնական լուծում չեն ստացել փախստականների բնակարանային, աշխատանքային և սոցիալական ապահովության հիմնահարցերը

Համայնքին վտանգ սպառնացող փոփոխությունները

- Համայնքի տարածքում մեծ թվով ձեռնարկությունների չգործելը դժվարություններ են առաջացնում համայնքային բյուջե մուտքագրվող հողի հարկի և գույքահարկի գանձման գործում
- Համայնքի որոշ բարձրահարկ շենքերից (մասնավորապես՝ Նորաշեն թաղամասում) թափվում են արտաքին հարդարման սալիկները, ստեղծելով վթարային վիճակ
- Ցածր է համայնքի տարածքում գործող համատիրությունների գործունեության արդյունավետությունը, այս համակարգը «Համատիրությունների մասին» ՀՀ նոր օրենքի ընդունումից հետո զգալի բարեփոխումների կարիք է զգում, հակառակ դեպքում վտանգվում է համայնքի բնակֆոնդի պահպանումը և շահագործումը:

2. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Աջափնյակի սոցիալ-տնտեսական զարգացման համար մեծ նշանակություն ունի Երևանի մետրոպի «Աջափնյակ» կայարանի շինարարությունը, որի շահագործումը էապես կթեթևացնի Աջափնյակի տրանսպորտային ծանրաբեռնվածությունը:

Քաղաքային նշանակության կապիտալ մեծ ներդրումներ պահանջող կարևոր օբյեկտ է հանդիսանում Հալաբյան փողոցի վրա գտնվող արդեն մասնավորեցված լողավազանի անավարտ կառույցը: Կատարված է շինարարական աշխատանքների մոտ 70%-ը: Շահագործելու դեպքում լողավազանը կարող է ծառայել ինչպես Աջափնյակի, այնպես էլ ամբողջ թաղաքի բնակչության առողջապահական, ֆիզիկական կուլտուրայի պահանջներին և մարզական միջոցառումների կազմակերպմանը: Ավելորդ չէ նշել, որ ամռանը թաղամասի երեխաները լողանում են առողջությանը վտանգ սպառնացող, համայնքի տարածքով հոսող Հրազդան գետում, ուր լցվում են շրջակայքում գտնվող ձեռնարկությունների և բնակելի շենքերի ու տների կեղտաջրերը: Կառույցի շինարարությունը շարունակելու համար թաղապետարանը հանդես է բերում շահագործվածություն:

Քաղաքային նշանակության Հ.Թունանյանի անվան զբոսայգին, համաձայն ՀՀ կառավարության և «EPYGI LABS AM L.L.C» ՍՊԸ միջև 05.09.2000թ. կնքած պայմանագրի, տրամադրվել է ամերիկյան կազմակերպությանը՝ բարձր տեխնոլոգիաների EPYGI –պարկ հիմնելու նպատակով: 2002թ.ավարտվել են հիմնական նախագծման աշխատանքները, 2003թ.-ից կսկսվեն շինարարական աշխատանքները:

Համայնքի Գ-3 և Սիլիկյան թաղամասերի միջև ընկած տարածքում կառուցվում է «Վահագնի» կանաչ թաղաքը, որը զբաղեցնելու է մոտ 170 հա տարածք: Կառուցապատումը իրականացվում է քրթեջային տիպի ցածրահարկ շենքերով, բաղկացած է լինելու մոտ 1000 քրթեջներից, սոցիալ-մշակութային, առևտրի և հանգստի օբյեկտներից: Ամերիկահայ գործարար պարոն Վահագն Հովնանյանի կողմից ընդհանուր առմամբ ներդրվելու է մոտ 100,0 մլն դոլար՝ կառուցելու տիպիկ ամերիկյան արբանյակ-քաղաք: Արդեն կառուցվել են առաջին 7 քրթեջները, 2003-05թթ. ծրագրվում է կառուցել մոտ 50 քրթեջ: Աշխատանքների ծավալումը իր դրական ազդեցությունն է թողնում նաև Աջափնյակի սոցիալ-տնտեսական զարգացման վրա, ստեղծվում են աշխատատեղեր, որի շնորհիվ հնարավոր է էականորեն լուծել նաև համայնքի բնակչության զբաղվածության խնդիրները:

Համաձայն ՀՀ կառավարության 25.10.2000թ. «ՀՀ տարածքում (բացառությամբ աղետի գոտու) վերանորոգման առաջնահերթ ծրագրերում ընդգրկված բնակավայրերի քանոման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու մասին» հ. 682 որոշման,

Երևանում 4-րդ կարգի վթարային 35 շենքերը քանդելու և բնակիչներին վերաբնակեցնելու աշխատանքների նախնական արժեքը կազմում է 1990,0 մլն դրամ, որից մոտ 1700,0 մլն դրամը՝ Աջափնյակի 4-րդ կարգի վթարային 27 շենքերի համար: 2002թ. ՀՀ պետական բյուջեում (պետական գույքի մասնավորեցման գումարներից) նախատեսվել էր 321,725 մլն դրամ՝ Աջափնյակի 4-րդ կարգի վթարային 4 շենքեր (Ֆուչիկի 10, Ֆուչիկի 19, Շինարարների 6, Սիսակյան 16) քանդելու և 132 բնակարանների բնակիչներին վերաբնակեցնելու համար: Ներկայումս այդ աշխատանքները ընթացքի մեջ են և կշարունակվեն 2003թ. և առաջիկա տարիներին՝ ավելի մեծ ծավալներով: 2003թ. նախատեսվում է քանդել և բնակիչներին վերաբնակեցնել Շինարարների 15, 23, 24, Սիսակյան 22 հասցեներով 4-րդ կարգի վթարային շենքերը, որի համար պահանջվում է մոտ 300 մլն դրամ:

Համայնքի 2-3-րդ կարգի վթարային շենքերը ժամանակին չամրացնելու և չվերանորոգելու դեպքում նրանք ևս աստիճանաբար կվերածվեն 4-րդ կարգի վթարային շենքերի և ենթակա կլինեն քանդման և բնակիչների վերաբնակեցման: Հաշվի առնելով հարցի կարևորությունը և անհետաձգելիությունը Երևանում «աղետի գոտի» գնահատվող Աջափնյակ համայնքի համար, 2003թ. ՀՀ պետական բյուջեից Աջափնյակ համայնքին սուբվենցիա (նպատակային հատկացում) տրամադրելու համար «Աջափնյակ համայնքի 3-րդ կարգի վթարային 4 շենքերի ամրացում» ծրագրով բյուջետային ֆինանսական հայտ է ներկայացվել ընդամենը 120,0 մլն դրամի չափով՝ համայնքի 3-րդ կարգի վթարային 4 բնակելի շենքերը (Հալաբյան 31, Ֆուչիկի 2-րդ նրբ. 5, Արզումանյան 12, Շինարարների 35) ամրացնելու նպատակով: Նպատակահարմար ենք գտնում այս գործընթացը շարունակել նաև հետագա տարիներին:

2001-2002 թթ. ընթացքում մշակվել և Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի քննարկմանն են դրվել համայնքին առնչվող 4 ծրագրային հայտեր, որոնց վերաբերյալ ՀՍՆՀ-ի կողմից կազմվել են փորձագիտական եզրակացություններ: Ներկայումս ՀՍՆՀ խորհրդի կողմից հաստատվել է «Աջափնյակ համայնքի Մարգարյան փողոցին հարակից հանգստի գոտու տարածքի բարեկարգման» ծրագիրը՝ 89,07 հազար ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով: Մշակվել են ծրագրի նախագծա -նախահաշվային փաստաթղթերը, կատարվել է համայնքի կողմից պահանջվող 10% ներդրումը՝ 5,2 մլն դրամի չափով, կազմակերպվել է մրցույթ կապալառու շինարարական կազմակերպությունը որոշելու համար: Ծրագրով նախատեսված շինարարական աշխատանքները կիրականացվեն 2003թ. ընթացքում: ՀՍՆՀ-ի հետ համագործակցությունը համայնքային ծրագրեր իրականացնելու բնագավառում կշարունակվի նաև 2004-05թթ. ընթացքում:

ՀՍՆՀ-ի հետ համագործակցությամբ 2003-04թթ. նախատեսվում է կապիտալ վերանորոգման աշխատանքներ (հիմնականում՝ տանիքներ, մարզադահլիճներ, սանհանգույցներ) իրականացնել համայնքի թվով 9 հանրակրթական դպրոցներում (Թթ. 100, 102, 109, 111, 122, 126, 131, 146, 156)՝ ապահովելով ընդհանուր մոտ 194,0 հազար ԱՄՆ դոլարի ներդրում և աջակցելով դպրոցներին կատարելու համայնքի կողմից պահանջվող 10% ներդրումները:

2003-04թթ. նախատեսվում է կապիտալ վերանորոգման ենթարկել համայնքի թիվ 166 մանկապարտեզը (տանիքը, պատերը, հատակը, ինժեներական կոմունիկացիաները, ջեռուցման համակարգը, ներքին հարդարման աշխատանքներ, կոշտ և փափուկ գույքի ձեռքբերում, տարածքի բարեկարգում, ոռոգում, ցանկապատում, խաղամիջոցների ձեռքբերում և այլն), այդ նպատակով կազմվել է ծրագրային հայտ՝ 93,7 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ, և ներկայացվել «Փրկեք երեխաներին» միջազգային կազմակերպության քննարկմանը:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Համայնքի 2003-05թթ. ռազմավարությունն է՝ հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, Աջափնյակը դարձնել մաքուր, բարեկարգ և գրավիչ բնակավայր:

Համայնքի 2003-05թթ. հիմնական նպատակներն են՝

- կազմել համայնքի գլխավոր հատակագիծը, գոտիավորման քարտեզը և հողօգտագործման սխեման, համագործակցելով Երևանի քաղաքապետարանի հետ
- մշակել նոր նոտեցումներ համայնքի տարածքում անավարտ մնացած բնակելի շենքերի կառուցապատման և առանձին շենքերի շահագործման համար
- շարունակել համայնքի 4-րդ կարգի վթարային շենքերի քանդման, բնակիչների վերաբնակեցման և 3-րդ կարգի վթարային շենքերի ամրացման աշխատանքները, համագործակցելով ՀՀ կառավարության և Երևանի քաղաքապետարանի հետ
- կազմակերպել համայնքում անհատական բնակարանային շինարարություն սկսելու գործընթացը, իրականացնելով հողերի վաճառք համայնքի Գ-1 թաղամասում և այլ ազատ տարածքներում
- ապահովել համայնքի բնակելի շենքերի պահպանումը, շահագործումը և նորոգումը, աջակցելով համայնքի տարածքում գործող համատիրություններին
- ապահովել խոշոր կապիտալ ներդրումներ համայնքի բնակարանային-կոմունալ տնտեսության, ճանապարհային տնտեսության, հանգստի և բակային տարածքների բարեկարգման բնագավառներում
- ապահովել համայնքի կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների կազմակերպությունների անխափան և նպատակային գործունեությունը, իրականացնել այդ կազմակերպությունների զբաղեցրած շենքերում հիմնական վերանորոգման և գույքի ձեռքբերման աշխատանքներ
- համայնքի տարածքում զարգացնել փոքր և միջին առևտուրը, գյուղատնտեսությունը, ստեղծելով նոր աշխատատեղեր մասնավոր սեկտորում
- կանոնակարգել գյուղատնտեսական անհատական տնտեսություններին ոռոգման ջրի մատակարարումը, օժանդակել նրանց արտադրված գյուղմթերքների իրացման հարցում
- միջոցներ ձեռնարկել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների, փախստականների սոցիալական, բնակարանային, կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման համար
- բարձրացնել համայնքի բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակը և որակը, բարելավելով համայնքի բյուջեի եկամուտների հավաքման աշխատանքները և նպատակային օգտագործելով բյուջեի միջոցները:

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆԱՅԵՐԹ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

4.1. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Աջափնյակ թաղամասի բոլոր հատվածների մանրամասն հատակագծային նախագծերը (ՄՅՆ) մշակված են բարձրահարկ պետական շինարարության տեսանկյունից, հնացած են և այսօրվա համար ոչ կիրառելի: Հետևաբար համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման նոր եռամյա ծրագրի մշակումը պետք է սկսել համայնքի գլխավոր հատակագծի արմատական վերակազմումից: 2003թ.-ից սկսած «Երևաննախագիծ» ՊՓԲԸ հետ համատեղ աշխատանքներ կտարվեն Երևանի գլխավոր հատակագծի մշակման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման ուղղությամբ: Ներկայումս, նոր տնտեսական իրավիճակում, համայնքի գլխավոր հատակագծի շրջանակներում նոր հողհատկացումներ կատարելու համար անհրաժեշտ կլինի վերամշակել նաև գոտիավորման քարտեզը, հողօգտագործման սխեման և բոլոր հատվածների ՄՅՆ-երը: Թաղամասի գլխավոր հատակագծի մակարդակով անհրաժեշտ է ճշտել համայնքի քաղաքաշինական, գյուղատնտեսական, արդյունաբերական նպատակներով օգտագործվող հողերի մակերեսները: Առանձնահատուկ ուշադրության ու լուծման կարոտ է բնակարանային հիմնախնդիրը, մասնավորապես՝ վթարային բնակելի շենքերի գոտու առնչությամբ:

Համայնքի քաղաքաշինական ցավոտ կողմերից է մեծաքանակ անավարտ բազմահարկ բնակելի շենքերի և այլ շինությունների առկայությունը, որոնք հիմնականում տեղաբաշխված են Գ-3 և Նորաշեն թաղամասերում: Ավելի քան 10 տարի կոռոզիայի են ենթարկվում շենքերի կոնստրուկտիվ հանգույցների մետաղական մասերը, որի պատճառով նշված շենքերը վտանգավոր են շրջապատի համար: Մեծ վտանգ են իրենցից ներկայացնում նաև անավարտ շինությունների մոտ գտնվող վերամբարձ կռունկները, որոնք քայքայման եզրին են՝ մետաղական մասերի տարեցտարի խորացող կոռոզիայի պատճառով:

Համայնքի գլխավոր հատակագծի մակարդակով անհրաժեշտ է նոր մոտեցումներ հանդես բերել և լուծումներ գտնել անավարտ մնացած թաղամասերի կառուցապատման և առանձին շենքերի շահագործման համար: 2003թ.-ից նախատեսվում է սկսել հողերի վաճառք համայնքի հյուսիս-արևմտյան Գ -1 բնակելի թաղամասում և այլ ազատ տարածքներում՝ անհատական բնակարանային շինարարության նպատակով: Գ -1 թաղամասում ընդգրկված են 500-1000 քմ մակերես ունեցող 209 հողակտորներ, կենտրոնական հատվածում նախատեսվում է կառուցել եկեղեցի: Նորաշեն և Գ-3 թաղամասերում տեղաբաշխված կիսակառույց բազմաբնակարանային շենքերի առնչությամբ նախատեսվում է մշակել 3-4 հարկանի շենքերի կառուցապատման տարբերակներ:

Գլխավոր հատակագծում կարևոր տեղ պետք է հատկացնել հանգստի գոտիների և բակային տարածքների կազմակերպմանը, հնարավորինս զարգացնելով դրանք: ՀՄՆՀ-ի հետ համագործակցությամբ 2003թ. կբարեկարգվի Հալաբյան - Մարգարյան փողոցների խաչմերուկին հարող հանգստի գոտին, որտեղ կշահագործվեն մոտ 6000 քմ մակերեսով և 0,8 -1,2 մ խորությամբ ջրավազանը՝ փոքրիկ նավակներով, մանկական տարբեր խաղեր, ատրակցիոններ, սրճարաններ, կտնկվեն մեծ քանակով տարբեր ծառատեսակներ և թփեր:

Բակային տարածքի բարեկարգման և հանգստի գոտու կազմակերպման աշխատանքներ կկատարվեն Նորաշեն թաղամասի 3-րդ շրջային հարող մոտ 2,2 հա տարածքում, որտեղ ՀՊԾ «Սնունդ աշխատանքի դիմաց» ծրագրի շրջանակներում նախատեսվում է բարեկարգել և ստեղծել օրինակելի բակային տարածք՝ մարզահրապարակներով, բեմահարթակով, մանկական խաղամիջոցներով և զրուցարաններով:

Գլխավոր հատակագծի կարևոր տարրերից է համայնքի տրանսպորտային համակարգի զարգացումը՝ ճանապարհային և փողոցային ցանցի կառուցապատման և վերանորոգման տեսանկյունով: Հաշվի առնելով Աջափնյակ համայնքի Երևան քաղաքի հյուսիս - արևմտյան դարպասը լինելու

հանգամանքը, կարևորվում է Գ.Չաուշի և Շիրազի փողոցների երկրորդ ժապավենի կառուցումը, որը զգալիորեն կբեռնաթափի մեկ ժապավենով շահագործվող այդ փողոցների երթևեկությունը: Առաջիկա երեք տարիներին նախատեսվում է նշված փողոցներն ընդգրկել Երևան քաղաքի կառուցապատվող փողոցների ցանկում:

Առաջիկա տարիներին առաջնային նշանակություն կտրվի համայնքում քաղաքաշինական նորմերի աստիճանական վերականգմանը՝ սկսելով քաղաքային նշանակության փողոցներից: Անկանոն տեղադրված առևտրի ժամանակավոր օբյեկտները կփոխարինվեն կրպակաշարերով, որոնք ներդաշնակորեն կծուլվեն փողոցի համայնապատկերին:

2003-05թթ. առաջնահերթ խնդիրների թվում են՝

- համայնքի տարածքում տեղադրված գովազդների և շինարարական աշխատանքների թույլտվությունների դիմաց ապահովել բյուջեի մուտքերը տեղական տուրքերի և վճարների գծով,
- կազմել նախագծեր բնակելի շենքերի բակերի բարեկարգման, բակային ճամբարների կազմակերպման աշխատանքների իրականացման համար,
- մշակված նախագծերի հիման վրա հեղինակային հսկողություն սահմանել համայնքի տարածքում իրականացվող շինարարական աշխատանքների նկատմամբ,
- ուժեղացնել հսկողությունը ապօրինի շինարարության նկատմամբ և հասնել դրա իսպառ վերացմանը,
- առաջարկություններ ներկայացնել հողհատկացումներ կատարելու վերաբերյալ՝ համայնքի բնակելի թաղամասերի տարածքներում խտացման տարբերակով անհատական բնակարանային շինարարության համար,
- երթուղային տրանսպորտի կուտակումները ծանրաբեռնված փողոցներում կանխելու նպատակով օժանդակել վերջնականգառի ձևավորման աշխատանքներին,
- շարունակել համայնքի տարածքում տեղադրված առևտրի և սպասարկումների ոլորտի կրպակների և տաղավարների արտաքին տեսքի արդիականացման գործընթացը, ապամոնտաժել քաղաքային նշանակության փողոցների վրա գտնվող չգործող և անհրապույր տեսք ունեցող ժամանակավոր օբյեկտները,
- բենզինի և գազի լիցքավորման կետերի աշխատանքի անվտանգությունը ապահովելու և բնակչության սպասարկման մակարդակը բարձրացնելու նպատակով աստիճանաբար վերացնել ժամանակավոր փոքր կետերը և աջակցել ստացիոնար կետերի ստեղծմանը:

Պատասխանատու՝ ճարտարապետության և քաղաքաշինության բաժին

(բաժնի պետ՝ Ռ. Կարապետյան)

4.2. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ-ԿՈՍՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

4.2.1. ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴԵՐԻ ՀԱՅԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Վթարային (հատկապես IV կարգի) բնակելի շենքերի խնդրի լուծումը տեսնում ենք ոչ այնքան դրանց ամրացման և ոչ էլ դրանց տեղում նոր բազմահարկերի կառուցման ճանապարհով, որքան այդ շենքերի քանդման և բնակիչների վերաբնակեցման, ազատված տարածքները մասնավոր տնաշինությանը հատկացման ճանապարհով: Նման առաջարկ, գլխավոր հատակագծի սահմաններում, թաղապետարանի կողմից ներկայացված է Երևանի քաղաքապետին:

Բնակարանային ֆոնդի պահպանումը, շահագործումը և նորոգումը համայնքում իրականացնում են «Աջափնյակի Շ և ՇՇ» ՓԲԸ (իրեն ենթակա 6 ԲՇՏ-ների միջոցով) և 52 համատիրությունները:

2003-05թթ. ընթացքում այս ոլորտում նախատեսվում է կատարել աշխատանքներ հետևյալ ուղղություններով՝

- ապահովել բյուջեի մուտքերը համայնքի ոչ բնակելի և ավտոտնակների զբաղեցրած տարածքներից,
- հիմնական և մասնակի վերանորոգման ենթարկել բնակելի շենքերի հարթ և թեք լանջավոր տանիքները,
- ընթացիկ և հիմնական վերանորոգման աշխատանքներ կատարել բնակելի շենքերի վերելակային տնտեսությունում,
- վերանորոգման աշխատանքներ կատարել բնակելի շենքերի ջրամատակարարման և կոյուղու ներքին ցանցերում, ջրհորդան խողովակների վրա, շքամուտքերում, աստիճանավանդակներում,
- բարեկարգել բնակելի շենքերի բակային տարածքներ (աշխատանքները կկատարվեն «Նպաստ աշխատանքի դիմաց» ծրագրով)
- վերականգնել բարձրահարկ բնակելի շենքերի պատերից թափված երեսապատման սալիկները,
- խիստ հսկողություն սահմանել համատիրությունների գործունեության նկատմամբ՝ նրանց աշխատանքները բարելավելու և գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով,
- հաշվառման վերցնել քաղաքացիների դիմումները բնակարանային պայմանների բա-րելավման, տնամերձերի հողհատկացման, ինքնական շինությունների օրինականացման, բնակարանների վարձակալական քարտերի անվանափոխման, կոոպերատիվ բնակելի շենքերի փայտտերերի անվանափոխման և այլնի վերաբերյալ:

Պատասխանատու՝ Շ և ՇՇ ՓԲԸ (տնօրեն՝ Ա.

Արամյան)

4.2.2.ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՄՈՒՆԱԼ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Բնակչության կոմունալ կենցաղային պայմանների բարելավման նպատակով թաղապետարանն իր մասնակցությունն ու աջակցությունը հանդես կբերի համայնքի ջրամատակարարման և ջրահեռացման, գազամատակարարման և ջեռուցման համակարգերում բարեփոխումներ իրականացնելու գործում:

Ջրամատակարարման բնագավառում նպատակ է հետապնդվում բնակչությանը ապահովել բավարար քանակությամբ խմելու ջրով, կանխել ջրի մեծ կորուստները և արտահոսքը արտաքին միջավայր: 2003-05թթ. ընթացքում նախատեսվում է համայնքում իրականացնել ջրաչափերի տեղադրման և ջրամատակարարման վարձավճարների գանձման կանոնակարգման աշխատանքներ:

Գազամատակարարումը, լինելով անհամեմատ էժան էլեկտրամատակարարումից, զգալի չափով թեթևացնում է բնակչության կոմունալ-կենցաղային պայմանները: «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ն ավարտել է այն թաղամասերի գազաֆիկացումը, որտեղ գերակշռում են մասնավոր տները (Անաստասավան, Լուկաշին, Սիլիկյան), ներկայումս գազով ապահովված են շուրջ 1150 բաժանորդներ: 2003թ.-ից նախատեսվում է սկսել համայնքի 3-5 հարկանի բնակելի շենքերի գազաֆիկացման աշխատանքները:

Անհամեմատ բարդ խնդիր է համայնքի ջեռուցման վերականգնումը, որն ընդգրկում է 2 կաթսայատներ, 41 ջերմային հանգույցներ, մոտ 40 կմ

երկարությամբ խողովակաշարերի ներքին ցանց, 600-ից ավելի ջեռուցվող օբյեկտներ, այդ թվում՝ բնակելի շենքեր, առողջապահական հիմնարկներ, դպրոցներ, նախադպրոցական, մշակույթի, սպորտի և այլ հիմնարկներ: Ջեռուցման համակարգի հիմնական վերանորոգման համար մոտավոր հաշվարկներով կպահանջվի մոտ 300,0 մլն դրամ գումար: Սկզբում նպատակահարմար է ջեռուցման համակարգը գործարկել համայնքի բարձրահարկ շենքեր ունեցող թաղամասերում՝ ԵրՖԻ, 15, Նորաշեն, Գ -3: Այս ուղղությամբ նախատեսվում է համագործակցել Երևանի քաղաքապետարանի «Ջերմային տնտեսություն» ՊՓԲԸ-ան հետ:

Պատասխանատու՝ Կոմունալ տնտեսության, բարեկարգման
և բնակ.ֆոնդերի սպասարկման բաժին
(բաժնի պետ՝ Ս.Հարությունյան)

4.2.3. ԱՂԲԱՅԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՍԱՔՐՈՒՄ

Նախատեսվում է ավելացնել համայնքի բնակչության կողմից արտադրվող կենցաղային աղբի և փոշու հավաքման և տեղափոխման հաճախականությունը: Կենցաղային աղբի տեղափոխումը կկատարվի ռիթմիկ, ըստ մշակված աշխատանքային երկիերթ գրաֆիկների, 19 երթուղիներով:

2003-05թթ. սանիտարական մաքրման աշխատանքների արժեքը 1 քմ մաքրվող տարածքի համար, ըստ նախնական հաշվարկի, կկազմի մոտ 110-120 դրամ, իսկ 1 տ աղբի տեղափոխման համար կպահանջվի մոտ 3200-3500 դրամ, տեղափոխվող աղբի կշիռը տարեկան կկազմի 35,0-40,0 հազար տոննա:

2003-05թթ. «Աջափնյակի սանմաքրում» ՍՊԸ-ան եկամուտները, բացի համայնքի բյուջեից հատկացվող միջոցներից, կառաջանան նաև համայնքի քաղաքային նշանակության 11 փողոցների մաքրման աշխատանքներից (պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան), համայնքի տարածքում գործող հիմնարկ-ձեռնարկությունների, առևտրի և սպասարկումների օբյեկտների, համատիրությունների հետ կնքած պայմանագրերով նախատեսված աշխատանքներից, բնակելի շենքերի և մասնավոր սեկտորի բնակիչներից ընկերության ֆինանսական գործակալների միջոցով գանձվող աղբի վարձավճարներից:

«Աջափնյակի սանմաքրում» ՍՊԸ-ն 2003-05թթ. ծրագրավորում է մեքենայական պարկի օգտագործման մակարդակը ներկայիս 70 %-ից հասցնել 80 %-ի, նոր աղբահարթակների կառուցում՝ 12 տեղում, աղբարկղերի թարմացում և ավելացում՝ տարեկան 30 հատ, ինչպես նաև ձեռնարկության մեքենայական պարկի թարմացում՝ 2 միավորով: Նախատեսվում է պահպանել հիմնական աշխատողների թվաքանակը՝ 101 մարդ, ավելացնելով աշխատանքների ծավալները և աշխատակիցների աշխատավարձը: Փողոցների և բնակելի շենքերի բակային տարածքների մաքրման գծով նախատեսվում է ավելացնել մաքրման ենթակա տարածքը՝ 2003թ. 7,5 հա-ով, այդ թվում մեքենայական եղանակով՝ 2,5 հա, ձեռքով՝ 5 հա, 2004թ.՝ 9,5 հա-ով, այդ թվում մեքենայական եղանակով՝ 4,5 հա, ձեռքով՝ 5 հա, 2005թ.՝ 11,5 հա-ով, այդ թվում մեքենայական եղանակով՝ 5 հա, ձեռքով՝ 6,5 հա: Միջոցներ կձեռնարկվեն ընկերության ֆինանսական վիճակի բարելավման ուղղությամբ:

Պատասխանատու՝ «Աջափնյակի սանմաքրում» ՍՊԸ (տնօրեն՝ Վ. Ջաքարյան)

4.2.4. ԿԱՆԱՉ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԽՆԱՍՔ ԵՎ ՈՌՈԳՈՒՄ

2003-05թթ. նախատեսվում է համայնքում ընդարձակել կանաչ տարածքները 6 հա-ով, տարեկան 2 հա-ով, որն իրագործելու համար անհրաժեշտ է ընթացիկ և հիմնական վերանորոգման ենթարկել գործող

ոռոգման համակարգերը՝ 2500 գծմ երկարությամբ, կառուցել նոր խողովակաշարեր. Միրաքյան՝ 1200 գծմ, Մելիքյան՝ 1800 գծմ, Ջոհրապի՝ 2000 գծմ, Մարգարյան՝ 120 գծմ, Բեկնազարյան՝ 80 գծմ, Խաչատրյան՝ 800 գծմ, Վշտունի՝ 2500 գծմ, Լենինգրադյան՝ 350 գծմ, Բաշինջաղյան՝ 220 գծմ փողոցներում և Նորաշեն՝ 2930 գծմ, Գ-3՝ 500 գծմ թաղամասերում:

Նախատեսվում է խիտ բնակեցված թաղամասերում (Նորաշեն, Գ-3, ԵրՖԻ) նոր այգիների, պուրակների ստեղծում, գազոնային տարածքի վերականգնում, ծառատնկում՝ 6000 ծառ, թփերի տնկում՝ 5000 թուփ, ծաղկային տարածության ընդարձակում՝ 700 քմ, ծառերի երիտասարդացում՝ 2200 ծառ, ծառերի և թփերի բուժում՝ տարեկան 2 անգամ:

Պատասխանատու՝ «Արսերմի» ՍՊԸ (տնօրեն՝ Ժ. Ոսկանյան)

4.2.5. ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Նախատեսվում է ապահովել քաղաքային և համայնքային նշանակության Հալաբյան, Լենինգրադյան, Շինարարների, Մարգարյան, Արզումանյան, Սարգսյան, Էստոնական, Լենինականի, Շիրազի, Բաշինջաղյան (մասնակի) փողոցների արտաքին լուսավորությունը՝ 9000 գծմ ընդհանուր երկարությամբ:

Ծրագրվում է կատարել արտաքին լուսավորության ցանցի վերականգնման աշխատանքներ Ֆուչիկի, Բեկնազարյան, Ջանիբեկյան փողոցներում, Նորաշեն, ԵրՖԻ, Գ-3 և Լուկաշին թաղամասերում՝ 7500 գծմ ընդհանուր երկարությամբ:

Պատասխանատու՝ ԿՏԲ և ԲՖՍ բաժին (բաժնի պետ՝ Ս. Հարությունյան)

4.2.6. ԹԱՓԱՌՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎՆԱՍԱԶԵՐԾՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Թափառող կենդանիների վնասազերծման միջոցառումներ նախատեսվում է կատարել համայնքի փողոցներում, մարդաշատ վայրերում, բնակելի շենքերի բակերում:

Պատասխանատու՝ ԿՏԲ և ԲՖՍ բաժին (բաժնի պետ՝ Ս. Հարությունյան)

4.3. ԳԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Նախատեսվում է իրականացնել համայնքային նշանակության փողոցների երթևեկելի և մայթերի ասֆալտե ծածկույթի ընթացիկ և կապիտալ վերանորոգման աշխատանքներ՝ 51,0 հազ. քմ ընդհանուր մակերեսով այդ թվում 2003թ.՝ 15,0 հազ. քմ, 2004թ.՝ 17,0 հազ. քմ, 2005թ.՝ 19,0 հազ. քմ: 1 քմ ասֆալտապատման աշխատանքների արժեքը կտատանվի 3000-3300 դրամի սահմաններում: Խնդիր է դրվում նաև նորոգել փողոցների եզրաքարեր (տարեկան մոտ 800 գծմ), մայթերի սալեր, դիտահորեր (տարեկան մոտ 35 հատ), բարեկարգել մայթերին հարող գազոններ:

Պատասխանատու՝ ԿՏԲ և ԲՖՍ բաժին (բաժնի պետ՝ Ս. Հարությունյան)

4.4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋՎԱՅՐԻ ՊԱՅՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս բնագավառի զարգացումը Աջափնյակում թաղապետարանը տեսնում է Սիլիկյան թաղամասի հողատարածքները և համայնքի գյուղատնտեսական նպատակով պիտանի պահուստային հողերը վարձակալությամբ բնակչությանը հանձնելու մեջ, հնարավորության սահմաններում օգնելով նրանց ձեռք բերել շուկայականից ցածր գներով սերմեր և թունաքիմիկատներ: Սակայն այս հողատարածքների մեծ մասը ոռոգման ջրի սակավության պատճառով տարիներ շարունակ չեն ոռոգվում, որի հետևանքով ամայում են դաշտերն ու այգիները, հողի վարձակալները չեն կարողանում մշակել և իր նպատակին ծառայեցնել այդ հողատարածքները: Այդ նպատակով մշակվել և Երևանի քաղաքապետարան է ներկայացվել «Աջափնյակ համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգման համակարգի վերականգնում» ծրագիրը, որի հիմնական նպատակներն են՝

- դարձնել ոռոգելի համայնքի գյուղատնտեսական նշանակության մոտ 300 հա հողա - տարածքներ,
- նվազեցնել ոռոգման ջրի կորուստները ներհամայնքային ոռոգման համակարգում,
- գյուղատնտեսությամբ զբաղվող բնակչության համար ստեղծել ներհամայնքային բա - վարար պայմաններ:

Ծրագրով նախատեսվում է 2003-05թթ. ընթացքում անցկացնել ներհամայնքային ոռոգման նոր ջրագիծ՝ 3,8 կմ երկարությամբ և 400 մմ տրամագծով, և ներտնտեսային ջրագծեր՝ 28,2 կմ ընդհանուր երկարությամբ և 300 մմ տրամագծով, ինչպես նաև կազմակերպել գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգման ներհամայնքային և ներտնտեսական համակարգերի սպասարկում:

Համայնքում այս բնագավառի զարգացումը ապահովելու նպատակով 2003-05թթ. նախատեսվում է իրականացնել հետևյալ խնդիրները.

- «Հողաշինարար» ՊՓԲԸ-ն հետ համատեղ կատարել համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերի նոր գնահատում, ճշտել յուրաքանչյուր հողակտորի կարգը, կադաստրային արժեքը, կազմել համայնքի հողերի նոր հաշվեկշիռը,
- կազմակերպել համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերի հաշվառում, փաստագրում և պայմանագրային հիմունքներով բնակչությանը վարձակալությամբ հողիատկացում,
- համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության նոր պայմանագրերի կնքում, օգտագործման դիմաց վարձավճարների գանձում՝ բյուջեի մուտքերի ապահովում,
- համայնքի անհատական գյուղատնտեսական տնտեսություններին ոռոգման ջրով ապահովելու նպատակով «Ոռոգում» ՊՓԲԸ հետ կնքել պայմանագիր, սահմանել ոռոգման ցանցից օգտվելու կանոնակարգ և վերահսկողություն,
- ոռոգման ջրի կորուստները նվազեցնելու նպատակով մաքրել, վերանորոգել և շահագործել ներհամայնքային ոռոգման ցանցը,
- համաքաղաքային կանոններին համապատասխան տալ համայնքի տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվություն և կատարել դրանց ամենամյա հաշվառում,
- կազմակերպել համայնքի տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի աշխատանքները,
- կազմակերպել համայնքի տարածքում անասնաբուժական ծառայության, հակահամաճարակային միջոցառումներ, կենդանիների հիվանդությունների կանխման և ազրարային այլ կանոնների պահպանման աշխատանքներ,

- աջակցել համայնքի տարածքում գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը,
- աջակցել տոհմային և սերմնաբուծական աշխատանքներին,
- կազմակերպել համայնքի սեփականություն համարվող հողերի, անտառային և ջրային տարածքների, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանությունը,
- կատարել համայնքի տարածքի էկոլոգիական հետազոտում, կազմել էկոլոգիական միջոցառումների պլան,
- ապահովել հողերի պահպանությունը հողատարումից, ողողումներից, ճահճացումից, քիմիական, ռադիոակտիվ նյութերով և արտադրական թափոններով աղտոտումից:

Պատասխանատու՝ Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի
պահպանության բաժին (բաժնի պետ՝ Ս. Թորոսյան)

4.5. ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐ

Համայնքի զարգացման ռազմավարական ուղղություններից մեկը մասնավոր բիզնեսի ընդլայնումն է, որը ներկա պահին նոր աշխատատեղեր ստեղծելու լավագույն բնագավառն է: Նախատեսվում է մարդկանց ամեն տեսակի օժանդակություն ցույց տալ ազատ ձեռներեցությամբ զբաղվելու համար:

Ելնելով համայնքի բնակչության սպասարկման կուլտուրայի բարելավման անհրաժեշտությունից, Աջափնյակի տարածքում նախատեսվում է կազմակերպել առևտրի և սպասարկումների հստակ կանոնակարգում և մշտական վերահսկողություն: Այս ոլորտում առաջնահերթ են հետևյալ խնդիրները.

- կարգավորել առևտրի և սպասարկումների օբյեկտների տեղաբաշխումը համայնքի տարածքում, ուշադրություն դարձնելով նրանց հեռավորությանը կանգառներից, արտաքին տեսքին և համաչափությանը փողոցի ընդհանուր կոլորիտին,
- վերջնականապես արգելել փողոցային առևտուրը, առևտրի, սպասարկումների և բենզինի լիցքավորման անօրինական և անշուք օբյեկտների տեղադրումը համայնքի տարածքում,
- կատարել պարբերաբար ստուգումներ՝ տեղի թույլտվությունը, առևտրի համաքաղաքային կանոնների պահպանումը, պարտաճանաչ մոտոմեքենաները բյուջե և կրպակների չափերի համապատասխանությունը նախագծին պարզելու նպատակով,
- համայնքի տարածքում կազմակերպել բացօթյա առևտուրը՝ հեղուկ գազի, բեռնատար ավտոմեքենաներից շինանյութի, կոշտ վառելիքի և գյուղատնտեսական մթերքների վաճառքը,
- ՆԳ Մաշտոցի բաժնի և Սանեփիղկայանի աշխատակիցների հետ համատեղ կազմակերպել ստուգայցեր՝ առևտուրը կանոնակարգելու և սանիտարական նորմերը ապահովելու համար,
- ապահովել բյուջեի մուտքերը համայնքի ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարների, տեղական տուրքերի ու վճարների գծով:

Երևանի քաղաքապետի 20.05.02թ. հ.841 որոշման համաձայն Երևան քաղաքի տարածքում 2003թ. հունվարի 1-ից կղադարեցվի գազի լիցքավորման շարժական կայանների գործունեությունը:

Համայնքում առևտրի ոլորտում առկա է ևս մեկ կարևոր հիմնախնդիր:

Աջափնյակում բացակայում է քիչ թե շատ մեծ ինչպես գյուղատնտեսական մթերքների շուկա, այնպես էլ առևտրա - արդյունաբերական ապրանքների տոնավաճառ: Այս կարևոր խնդրի լուծումը

բնակչությանը կազատի հասնելու Մալաթիա կամ Կենտրոն՝ ամենամահիրաժեշտ գնումներ կատարելու համար, կթեթևացնի քաղաքային տրանսպորտի ծանրաբեռնվածությունը: Մեր գնահատմամբ, այս խնդրի լուծումը հնարավորություն կտա զգալի չափով ավելացնել բյուջեի եկամուտները, ներդրվող ֆինանսական միջոցները արագ կփոխհատուցվեն:

Պատասխանատու՝ Առևտրի և սպասարկումների բաժին
(բաժնի պետ՝ Ա. Հարությունյան)

4.6. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Հանրապետությունում դեռևս անբավարար է կրթական համակարգի աշխատողների սոցիալական վիճակը, հատկապես առաջնային է կրթական օջախի դերի վերականգնումը և մանկավարժի աշխատանքի նկատմամբ պետության արժանապատիվ վերաբերմունքը: Անհրաժեշտ ենք համարում փուլ առ փուլ բարձրացնել կրթության բնագավառի աշխատողների աշխատավարձը, վճարումները կատարել ժամանակին:

4.6.1. ՄԱՆԿԱԿԱՆ ՆԱԽԱԳՊՐՈՑԱԿԱՆ ՅԻՄՆԱՐԿՆԵՐ

Համայնքի թվով 16 մանկական նախադպրոցական հիմնարկները գործում են թերբեռնված, իրենց նախագծային հզորությանը ոչ համապատասխան: Նույն թաղամասում իրար մոտ գործում են մի քանի թերբեռնված մսուր-մանկապարտեզներ, այդ պատճառով նպատակահարմար ենք գտնում 2003-05թթ. ընթացքում նրանց ընդհանուր թիվը կրճատել ևս 1-ով, ազատված շենքը ծառայեցնելով այլ նպատակների համար: 2003թ.-ին նախատեսվում է պարբերաբար անցկացնել ստուգումներ համայնքի բոլոր նախադպրոցական հիմնարկներում՝ ճշտելու երեխաների, խմբերի թիվը, հաճախելիությունը, ըստ այդմ ճշտելու այդ հիմնարկների հետագա պահպանության ծախսերը, աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակները, աշխատավարձերի չափերը: Արված խնայողությունների հաշվին նախատեսվում է 20-30 %-ով բարձրացնել կրթության բնագավառի աշխատողների աշխատավարձը, ավելացնել մսուր-մանկապարտեզի մեկ երեխայի հաշվով սննդի օրական բյուջետային ծախսը՝ 70 դրամից հասցնելով 100 դրամի, բարձրացնել սննդի որակը և կալորիականությունը, և ընդհանրապես, 15-20 %-ով ավելացնել համայնքի նախադպրոցական հիմնարկներին հատկացվող բյուջետային ծախսերը տնտեսագիտական դասակարգման բոլոր ուղղություններով:

Համայնքի թ.թ. 108, 109, 148, 156, 166, 188, 233, 243, 265, 310, 311 մսուր-մանկապարտեզները գտնվում են շենքային անբավարար վիճակում, որը չի համապատասխանում պահանջվող սանիտարահիգիենիկ նորմերին, ապահովված չեն խաղահրապարակներով, բակերը անբարեկարգ են: Նախատեսվում է կապիտալ ներդրումներ կատարել վերը նշված մանկապարտեզների շենքերի տանիքների վերանորոգման, կոյուղիների և ջրագծերի, լուսավորության ցանցի և էլեկտրագծերի նորոգման, խմբասենյակների և միջանցքների նորոգման և հարդարման, բակերի բարեկարգման համար:

Համայնքի գիշերօթիկ կրթահամալիրի շենքի կապիտալ վերանորոգման համար մշակվել է ծրագիր և ներկայացվել Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամ: Ծրագրի հիմնական նպատակն է՝ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար ստեղծել նպատակային կրթության, դաստիարակության և զարգացման նորմալ պայմաններ ունեցող գիշերօթիկ կրթահամալիր: Իրականացնելով այս ծրագիրը, արդյունքում հիմնական կվերանորոգվի 2900 քմ ընդհանուր

տարածքով կրթահամալիրի շենքը, որտեղ կգործեն 18 խմբեր և դասարաններ՝ համալրված 177 երեխաներով և 60 մշտական աշխատողներով: Ծրագիրն իրականացնելու համար, ըստ նախնական մոտավոր հաշվարկի, պահանջվում է մոտ 18 600,0 հազ.դրամ, որի 90%-ը՝ 16 740,0 հազ.դրամ, ակնկալվում է ՀԱՆՀ-ի կողմից, իսկ 10 %-ը՝ 1860,0 հազ.դրամ, որպես համայնքի կողմից ներդրում:

Ձմռանը մանկական նախադպրոցական հիմնարկների տաքացման համար հիմնականում կօգտագործվեն հեղուկ վառելանյութով աշխատող վառարաններ, որոնց անխափան օգտագործման համար ձեռք կբերվեն անհրաժեշտ պահեստամասեր՝ խողովակներ, անկյուններ, տակդիրներ:

2003-05թթ. աջակցություն կցուցաբերվի համայնքի 20 հանրակրթական դպրոցներին՝ շենքերի վերանորոգման աշխատանքների և երեխաների ամառային հանգստի կազմակերպման ուղղություններով:

4.6.2. ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ

Համայնքում գործող մանկապատանեկան տեխնիկական ստեղծագործության կենտրոնի (ՄՊՍԿ) գործունեությունը կազմակերպվում է հիմնականում համայնքի հանրակրթական դպրոցներում:

Նախատեսվում է ՄՊՍԿ-ի զբաղեցրած տարածքում իրականացնել նորոգման և հարդարման աշխատանքներ:

Կրթության բնագավառի
ընդհանուր պատասխանատու՝ Կրթության, մշակույթի և սպորտի
բաժին

(բաժնի պետ՝ Գ. Սայադյան)

4.7. ՄՇԱԿՈՒՅԹ

4.7.1. ԵՐԱԺՇՏԱԿԱՆ, ԱՐՎԵՍՏԻ ԵՎ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ

Համայնքում գործող թ.թ. 5, 12, 21 երաժշտական դպրոցներից թիվ 12 դպրոցի շենքային պայմանները բավարար չեն ուսումնական պրոցեսի կազմակերպման համար: Հնարավորության դեպքում, ազատվող մուր-մանկապարտեզի որևէ մասնաշենք կվերակառուցվի և կտրամադրվի թիվ 12 երաժշտական դպրոցին:

«Աջափնյակ» մանկական գեղագիտական դաստիարակության կենտրոնի հիմնումը նոր ասպարեզ և լայն հնարավորություններ է ստեղծել համայնքի շնորհալի երեխաների գեղագիտական ունակությունները զարգացնելու համար: Կենտրոնը փաստորեն համայնքի միակ կրթամշակութային համալիրն է, որից կօգտվեն ոչ միայն Նորաշեն թաղամասի, այլև ամբողջ համայնքի երեխաները: 2003-05թթ. առաջնահերթ խնդիր է կենտրոնին անհրաժեշտ կոշտ և փափուկ գույքի ձեռքբերումը՝ կենտրոնի նպատակային գործունեությունը կազմակերպելու համար:

4.7.2. ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՆԵՐ

Սիլիկյան թաղամասի ակումբը գործում է հարմարեցված շենքում, որը խարխուլ վիճակում է, ունի խիստ սահմանափակ հնարավորություններ: Ակումբի շենքի վերակառուցման և վերանորոգման դեպքում այն լիարժեք

կծառայի թաղամասի բնակչության մշակութային և հասարակական առօրյայի կազմակերպմանը:

4.7.3. ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Համայնքում գործող Գրադարանային կենտրոնացված համակարգի գծով աշխատանքներ կկատարվեն գրքային ֆոնդի հաշվառման, պահպանման և բնակչությանը սպասարկման ուղղությամբ: 2005թ. նախատեսվում է հիմնական վերանորոգման ենթարկել ԳԿՀ 3-րդ մասնաճյուղի շենքի հարթ տանիքը:

Մշակույթի բնագավառի
ընդհանուր պատասխանատու՝ Կրթության, մշակույթի և սպորտի
բաժին

(բաժնի պետ՝ Գ. Սայադյան)

4.8. ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹՅՈՒՆ, ՄԱՐՄՆԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊՈՐՏ

Համայնքում գործող միակ մարզադպրոցի շենքային պայմանները չեն բավարարում բնակչության մարմնակրթության և սպորտի զարգացման պահանջներին: Մարզադպրոցը չունի դահլիճ, տարիներ շարունակ պարապմունքները անցկացվում են համայնքի տարածքում գտնվող հանրակրթական դպրոցների մարզադահլիճներում: Վաղուց հասունացել է համայնքում նոր մարզադպրոց հիմնելու հարցը, սակայն համայնքային բյուջեի հնարավորությունները առայժմ թույլ չեն տալիս այդ հարցը լուծել սեփական ուժերով, անհրաժեշտ է փնտրել լրացուցիչ ներդրումներ: Այդ նպատակին լավագույնս կծառայեր թիվ 126 դպրոցի մարզադահլիճի վթարային շենքը, որի վերակառուցման համար մշակվել է ծրագիր և ներկայացվել ՀՍՆՀ:

Այս ոլորտում՝ երեխաների առողջության պահպանման նպատակով, նախատեսվում է իրականացնել տարբեր տեսակի մարզական միջոցառումներ համայնքի հանրակրթական և մասնագիտացված դպրոցներում: Կկազմվի համայնքի մարզական միջոցառումների համալիր ծրագիր, որը հնարավորություն կտա էլ ավելի բարձրացնելու սպորտի դերը Աջափնյակում: Նախատեսվում է անցկացնել բազմապիսի միջոցառումներ՝ նվիրված հիշարժան տարելիցներին, անվանի մարդկանց, զոհված ազատամարտիկներին: Կկազմակերպվեն տարբեր մասշտաբի սպարտակիադաներ, համայնքի հավաքական թիմերը կմասնակցեն մայրաքաղաքի նմանատիպ մարզական միջոցառումներին:

Համայնքի բնակչության շրջանում մշակութա-մարզական միջոցառումների կազմակերպման, երեխաների գեղագիտական դաստիարակության բնագավառում տարվող աշխատանքները բավարար չեն, խիստ զգացվում է հատկապես մշակութային և մարզական միջոցառումների անցկացման բացօթյա մշտական վայրի կարիք: Միջոցառումներ կազմակերպելու համար առայժմ կօգտագործվեն Արցախյան պատերազմի ազատամարտիկների անվան զբոսայգին և ՀՍՆՀ-ի ծրագրով բարեկարգվող Հալաբյան-Մարգարյան փողոցներին հարակից հանգստի գոտին:

Առողջապահության և սպորտի բնագավառի
ընդհանուր պատասխանատու՝ Կրթության, մշակույթի և սպորտի
բաժին

(բաժնի պետ՝ Գ. Սայադյան)

4.9 ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Նախատեսվում է աջակցություն ցուցաբերել Տեղական ինքնակառավարման բնագավառում ՀՀ-ում գործող հասարակական կազմակերպություններին, մասնավորապես՝ Հայաստանի համայնքների միությանը, «Հայաստանի ավագանիներին», Համայնքների ֆինանսիստների միավորմանը, Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոնին, որը հնարավորություն կտա համայնքի ՏԻՄ-երին ակտիվ մասնակցություն հանդես բերելու վերոհիշյալ հասարակական կազմակերպությունների գործունեությանը:

Պատասխանատու՝ Սոցիալ-տնտեսական ծրագրերի և արտաքին կապերի բաժին

(բաժնի պետ՝ Վ. Շահբազյան)

4.10. ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառում 2003թ.-ից սկսած համայնքն իրականացնելու է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունը՝ համայնքի տարածքում կազմակերպել սոցիալական օգնության ծառայության գործունեությունը: Կտարվեն նախապատրաստական աշխատանքներ համայնքի սոցիալական ծառայության ընդունման-հանձնման և գործունեության լիարժեք կազմակերպման ուղղությամբ:

Մեր ժամանակին համահունչ է բարեգործական միջոցառումների ձեռնարկումը բնակչության սոցիալապես անապահով խավերին ինչ-որ չափով նեցուկ կանգնելու համար: Հատուկ հոգածության են արժանի մոտ 2000 փախստականներ, որոնց բնակարանային և աշխատանքի հիմնախնդիրները թաղապետարանի մշտական հսկողության տակ կլինի:

Աջափնյակի թաղապետարանը Գերմանական կարմիր խաչի և Հայկական կարմիր խաչի ընկերության հետ համատեղ կշարունակի «Գթության խոհանոց» բարեգործական ճաշարանի գործարկման ծրագիրը համայնքի 300 հաշմանդամների և միայնակ թոշակառուների համար, որը գործում է «Արցախ» ՍՊԸ տրամադրած տարածքում: Համայնքային բյուջեում կնախատեսվեն միջոցներ «Գթության խոհանոցի» օգտագործած էլեկտրաէներգիայի ծախսը վճարելու համար:

Աջափնյակի թաղապետարանի և միջազգային ADRA կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի միջև կնքած պայմանագրի համաձայն համայնքում կգործարկվի ևս մեկ բարեգործական ճաշարան (Ա.Սարգսյան 1)՝ սոցիալապես անապահով 170 անձանց համար, որից 100-ը՝ Աջափնյակի բնակիչներ: Աջափնյակի թաղապետարանը կվճարի ճաշարանի տարածքի վարձակալության և էլեկտրաէներգիայի ծախսերը հոգալու համար:

Թաղապետարանի նախաձեռնությամբ 2001թ. բացվել է «Աջափնյակ» բարեգործական հասարակական կազմակերպությունը, որին կփոխանցվեն միջոցներ ինչպես համայնքի բյուջեից, այնպես էլ համայնքի ձեռնարկություններից, կազմակերպություններից, գործարար մարդկանցից՝ տարբեր սոցիալական ծրագրեր իրագործելու համար: «Աջափնյակ» բարեգործական կազմակերպության ներգրաված միջոցներով նախատեսվում է պարբերաբար դրամական և այլ օգնություն ցուցաբերել կարիքավոր ընտանիքներին, զրիված ազատամարտիկների ընտանիքներին, ծնողազուրկ երեխաներին, հաշմանդամներին և բնակչության սոցիալապես անապաշտպան այլ խավերին, կազմակերպել միջոցառումներ՝ նվիրված Հաղթանակի օրվան, Ամանորին և այլն:

4.11. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դրված նպատակներին հասնելու, խնդիրներն իրականացնելու և ճիշտ որոշումներ կայացնելու համար համայնքի ղեկավարն իր տրամադրության տակ պետք է ունենա ստույգ և որակյալ ինֆորմացիա համայնքի իրավիճակի վերաբերյալ: ՏԻ բոլոր ուղղություններով համայնքում տեղեկատվական-վերլուծական համակարգչային կենտրոնի ստեղծումը վաղուց դարձել է հրատապ ու արդիական խնդիր, որը հնարավորություն կտա ավտոմատիզացնել և արագացնել ՏԻ աշխատատար շատ գործընթացներ, մասնավորապես՝

- ընտրություններ և հանրաքվեներ անցկացնելու համար համայնքի բնակչության ընտրական ցուցակների նախապատրաստում,
- համայնքի ավագանու նիստերի կազմակերպում,
- թաղապետարանի գործավարության կազմակերպում,
- համայնքային բյուջետային գործընթացի արդյունավետ կազմակերպում,
- զարգացման ծրագրեր մշակելու և իրագործելու գործընթացի առավել արդյունավետ կազմակերպում,
- ՏԻ լիազորությունների շրջանակում ըստ բնագավառների տվյալների բազաների ստեղծում (բնակելի և ոչ բնակելի ֆոնդերի, հողատարածքների, կրթության և մշակույթի հիմնարկների, առևտրի և սպասարկումների օբյեկտների և այլնի վերաբերյալ),
- լրացուցիչ համակարգչային ծառայության մատուցում:

Վերը նշված աշխատանքները իրականացնելու նպատակով գերմանական GTZ և ամերիկյան URBAN կազմակերպությունների աջակցությամբ 2001-02թթ. ձեռք են բերվել 5 համակարգիչներ, 1 տպիչ, ցանցային տեխնիկա, տեղադրվել է համակարգչային լոկալ ցանց: 2003-05թթ. ընթացքում նախատեսվում է Համայնքների ֆինանսիստների միավորման, Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոնի և այլ կազմակերպությունների հետ համագործակցությամբ ձեռքբերել և ներդնել ՏԻ բնագավառի համակարգչային համապատասխան ծրագրային ապահովում (ընտրական ցուցակների նախապատրաստում, գործավարության կազմակերպում, համայնքային բյուջետային գործընթացի կազմակերպում, բնակչության ռեգիստր, քաղաքաշինական քարտեզագրություն և այլն), ստեղծել համայնքային տեղեկատվական-վերլուծական կենտրոն:

2003-05թթ. նախատեսվում է համայնքի բյուջեում միջոցներ հատկացնել համակարգիչների պահպանման և տեխնիկական սպասարկման (պայմանագրային եղանակով), նոր համակարգիչներով համալրման, INTERNET համակարգչային ցանցին միացման և շահագործման համար:

2003-05թթ. նախատեսվում է թաղապետարանում ստեղծել լրատվական կենտրոն, ձեռքբերել տեսախցիկ, ֆաքս և այլ սարքավորումներ՝ համայնքի գործունեության վերաբերյալ առավել օպերատիվ լրատվություն հավաքելու և լուսաբանելու նպատակով: Նոր օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերը ժամանակին ստանալու համար ծրագրվում է բաժանորդագրվել պաշտոնական տեղեկագրեր, մասնագիտական և հասարակական-քաղաքական թերթեր ու ամսագրեր:

Վերոհիշյալ խնդիրների լուծումը հնարավորություն կտա բարձրացնել թաղապետարանի գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը, համայնքի անդամներին առավել ակտիվորեն մասնակցել համայնքի կառավարմանն ու բարգավաճմանը:

4.12. ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակիչների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու նպատակով թաղապետարանում պարբերաբար կկազմակերպվեն համայնքի ղեկավարի և ավագանու անդամների ընդունելության օրեր, որի շնորհիվ բնակչությունը հնարավորություն կունենա բարձրացնել իրեն հուզող հարցերը, մասնակցելու համայնքի կառավարմանն ու զարգացմանը:

Թաղապետարանի իրավաբանական բաժինը համայնքի քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների համար կկատարի իրավախորհրդատվական աշխատանք, կքննարկի նրանց իրավունքների խախտումների վերաբերյալ զանգատներն ու դիմումները, կաջակցի նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը:

Լուրջ աշխատանքներ կկատարվեն թաղապետարանի կողմից կնքվող պայմանագրերի, ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների օրինականությունը ապահովելու ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում համայնքի շահերը կներկայացվեն այլ անձանց հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դրանք կպաշտպանվեն դատարանում (հայցվոր, պատասխանող, երրորդ անձ):

Պատասխանատու՝ Իրավաբանական բաժին (բաժնի պետ՝ Լ. Տոնոյան)

4.13. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակչության պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում ապահովելու համար 2003-05թթ. նախատեսվում է իրականացնել հետևյալ առաջնահերթ խնդիրները՝

- համայնքում կազմակերպել շուրջօրյա օպերատիվ հերթապահություն,
- հաշվառել համայնքի տարածքում առկա քաղաքաշտպանության ընթացիկ ապահովման գույքը,
- վերանորոգել առկա ազդարարման և կապի միջոցները,
- ձեռք բերել նոր ազդարարման, կապի միջոցներ,
- համայնքի գործող ազդարարման և կապի միջոցները միացնել Երևան քաղաքի կենտրոնացված համակարգին,
- ապամոնտաժել համայնքի տարածքում առկա վթարային վերամբարձ կշունկները,
- վերանորոգել և համապատասխան կապի միջոցներով և գույքով ապահովել Երևանի ֆիզիկայի ինստիտուտի ապաստարանում տեղակայված ԱԻ և ՔՊ պահեստային կառավարման կետը,

- կազմակերպել համայնքի տարածքում ընկնելու վտանգ ներկայացնող բարդի տեսակի ծառերի հատման աշխատանքներ,
- կազմակերպել և անցկացնել համայնքի ԱԻ և ՔՊ ուժերի հրամանատարաշտաբային ուսումնավարժանքներ,
- Աջափնյակի ԱԻ և ՔՊ բաժնին ապահովել անհրաժեշտ գրասենյակային գույքով և գրեմական պիտույքներով,
- արտակարգ իրավիճակներում կազմակերպել բնակչության պաշտպանության միջոցառումներ:

Երևանի խորհրդի 13.12.99թ. թիվ 11 որոշմամբ ստեղծվել է «Երևանի փրկարարական և վթարա-վերականգնողական միջհամայնքային միությունը», որի աշխատանքներին իր մասնակցությունը կբերի նաև Աջափնյակ համայնքը: Այդ նպատակով համայնքային բյուջեում կնախատեսվեն համապատասխան միջոցներ՝ որպես միջհամայնքային միության անդամավճար:

Երևան քաղաքի 2003-05թթ. հիմնական միջոցառումների պլանում ընդգրկված են հետևյալ միջոցառումները՝

- շտաբային ուսումնավարժության «Ուժեղ երկրաշարժի դեպքում Երևան քաղաքի ՔՊ ծառայությունների գուրծունեության կազմակերպումը» թեմայով,
- շտաբային վարժանք «Վտանգավոր տարածքից բնակչության տարահանման կազմակերպումը» թեմայով,
- վարժանքներ Երևան քաղաքի առաջին կանչի ուժերի ազդարարման և պատրաստականության բերման ուղղությամբ:

Պատասխանատու՝ Աջափնյակ համայնքի ԱԻ և ՔՊ բաժին
(բաժնի պետի ժ/պ՝ Բ. Ավանեսյան)

5. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքի նպատակային գործունեությունը ապահովելու համար անհրաժեշտ է մշակել ֆինանսական միջոցների գնահատման, կանխատեսման և հայթայթման ճկուն մեխանիզմներ: Աջափնյակ համայնքն ունի զգալի կարիքներ և սահմանափակ ֆինանսական հնարավորություններ:

Օրենքով նախատեսված հողի հարկի և գույքահարկի գանձումը առայժմ կատարվում է հարկային մարմինների կողմից: Ելնելով նախորդ տարիների փորձից, վստահություն չի ներշնչում հարկային տեսչության կողմից կազմակերպվող հողի հարկի և գույքահարկի գանձման գործընթացը: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ նոր օրենքով նախատեսվում է 2003թ. երկրորդ կիսամյակից այդ աշխատանքները հանձնել ՏԻՄ-երին՝ անմիջապես շահագրգիռ կողմին, նշված հարկերի գանձումը ավելի արդյունավետ կազմակերպելու համար: Այսպիսի թույլտվություն համայնքները ներկայումս ունեն՝ ֆիզիկական անձանցից գույքահարկի գանձման աշխատանքների կազմակերպման համար: Նախատեսվում է կազմակերպել քաղաքացիների սեփականության գույքի (բնակարաններ, ավտոտնակներ) գույքագրման, հողի հարկի և գույքահարկի գանձման աշխատանքները, ստեղծելով պայմանագրային հիմունքներով տեսչական խմբեր:

Համայնքի տնօրինության տակ է գտնվում գյուղատնտեսության համար պիտանի պետական պահուստային հողեր, որոնք հատկացվում են բնակչությանը վարձակալական հիմունքներով:

Համայնքի բյուջեի հիմնական սեփական մուտքերը գոյանում են ոչ հարկային եկամուտներից՝ առևտրի և սպասարկումների ոլորտի օբյեկտներից,

ոչ բնակելի տարածքներից, ավտոտնակների զբաղեցրած տարածքներից զանձվող վարձավճարներից:

Համայնքի ֆինանսական սեփական բազայի ամրապնդմանը էապես կնպաստի նաև տեղական տուրքերի ու վճարների սահմանման և զանձման ճկուն մեխանիզմների մշակումը:

Համայնքային բյուջեի մուտքերի զգալի մասը կկազմի ֆինանսական համահարթեցման սկզբունքով ՀՀ պետական բյուջեից հատկացվող դոտացիան: Զգալի գումարներ են ակնկալվում նաև պետական բյուջեից համայնքի վթարային շենքերի ամրացման կամ քանդման և բնակիչների վերաբնակեցման ուղղությամբ:

2003-05թթ. ֆիսկալ տարիների համայնքի բյուջեի եկամուտները կանխատեսելու նպատակով ներկայացնում ենք նախորդ տարիների եկամտային փաստացի ցուցանիշները ըստ առանձին եկամտատեսակների և կատարված հաշվարկը՝ հիմնված օրենսդրական փոփոխությունների և համայնքի սոցիալ-տնտեսական առանձնահատկությունների վրա (տե՛ս աղյուսակ 1):

2003-05թթ. նախատեսվում է մշակել և իրականացնել սոցիալ-տնտեսական զարգացման մի շարք կոնկրետ ծրագրեր, որոնց ֆինանսավորման նպատակով կծավալենք համագործակցություն ՀՀ-ում գործող տարբեր հիմնադրամների (ՀՄՆՀ, «Փրկեք երեխաներին» և այլ) հետ, իսկ համայնքային բյուջեում կնախատեսվեն համայնքի կողմից պահանջվող ներդրումները:

Չնախատեսված ծախսերի և արտակարգ իրավիճակների համար բյուջեում կնախատեսվի պահուստային ֆոնդ, որի ծախսային ուղղությունները կորոշվեն ավագանու որոշումներով: Պահուստային ֆոնդի մի զգալի մասը նախատեսվում է մասհանում անել ֆոնդային բյուջե՝ կապիտալ ներդրումներ և վերանորոգման աշխատանքներ իրականացնելու համար:

Պատասխանատու՝ Ֆինանսական բաժին (բաժնի պետ՝
Ռ.Աբրահամյան)

Աղյուսակ 1

ԱԶԱՓՆՅԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2000-2002թթ. ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՍՈՒՏՔԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ 2003-05թթ. ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՍՈՒՏՔԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ

ՀՀ	ՍՈՒՏՔԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ	հազար դրամ						
		2000թ. փաստ.	2001թ. փաստ.	2002թ. նախատ.	2002թ. փաստ.	2003թ. կանխ.	2004թ. կանխ.	2005թ. կանխ.
1	2	3	4	5	6	7	8	9
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՍՈՒՏՔԵՐԻ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III+IV)	335295,8	522643,4	827941,4	744946,5	734589,1	644500,0	707800,0
I.	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ և ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ (Ա+Բ)	333487,7	502495,8	824898,1	741903,2	730253,9	641500,0	704800,0
Ա.	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (Ա.1+Ա.2)	128453,9	157347,7	254810,0	172763,7	191850,0	271500,0	304800,0
Ա.1.	ԸՆԹԱՑԻԿ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	123412,5	124364,4	224810,0	143787,2	181850,0	256500,0	284800,0
1.	ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	86235,3	91735,5	125000,0	79912,0	100000,0	173000,0	195000,0
1.1.	Հողի հարկ	9825,8	11132,3	15000,0	5270,3	10000,0	13000,0	15000,0
1.2.	Գույքահարկ	76409,5	80603,2	110000,0	74641,7	90000,0	100000,0	110000,0
1.3.	Այլ հարկային եկամուտներ					--	60000,0	70000,0
2.	ՏՈՒՐՔԵՐ	13261,1	15969,4	26610,0	15788,5	23150,0	22000,0	25000,0
2.1.	Պետական տուրքեր							

2.2.	Տեղական տուրքեր	13261,1	15969,4	26610,0	15788,5	23150,0	22000,0	25000,0
3.	ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՍՈՒՏ.	23916,1	16659,5	73200,0	48086,7	58700,0	61500,0	64800,0
3.1.	ՏԻՄ-երի հաշվեկշիռներում հաշվառվող գույքի վարձա կալուքյունից եկամուտներ	23008,3	16143,4	61500,0	43936,6	57500,0	60500,0	63500,0
ա)	Համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարներ	18840,8	16143,4	60000,0	43936,6	57000,0	60000,0	63000,0
	- գյուղատնտ. նշ. հողերի	4048,8	538,8	4000,0	478,9	3000,0	2500,0	3000,0
	- ոչ գյուղատնտ. նշ. հողերի	14792,0	15604,6	56000,0	43457,7	54000,0	57500,0	60000,0
բ)	Այլ գույքի վարձակալությունից եկամուտներ	4167,5	--	1500,0	--	500,0	500,0	500,0
3.2.	Դիվիդենդներ և շահաբաժ.							
3.3.	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ կողմից կիրառվող պատժամիջոցներից եկամուտներ	673,8	313,9	1000,0	323,3	1000,0	750,0	1000,0
3.4.	Տեղական վճարներ	234,0	202,2	200,0	95,5	200,0	250,0	300,0
3.5.	Այլ ոչ հարկային եկամուտ.	--	--	10500,0	3731,3	--	--	--
Ա.2.	ԵԿԱՍՈՒՏՆԵՐ ԿԱՊԻՏԱԼԻ ԳՈՐԾԱՐՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ	5041,4	32983,3	30000,0	28976,5	10000,0	15000,0	20000,0
Բ.	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍ - ՖԵՐՏՆԵՐ (Բ.1.+Բ.2.)	205033,8	345148,1	570088,1	569139,5	538403,9	370000,0	400000,0
Բ.1.	ՊԱՇՏ. ԸՆԹԱՑԻԿ ՏՐԱՆՍ-ՖԵՐՏՆԵՐ	205033,8	345148,1	570088,1	569139,5	538403,9	370000,0	400000,0
ա)	ՀՀ պետական բյուջեից ստացվող հատկացումներ՝ դոտացիաներ	176927,4	345148,1	438088,1	437139,5	420403,9	370000,0	400000,0
1	2	3	4	5	6	7	8	9
	- նախորդ տարիների դոտացիաներ	115685,3	--	95193,9	95193,9	--	--	--
	- ընթացիկ տարվա դոտացիա	61242,1	345148,1	342894,2	341945,6	420403,9	370000,0	400000,0
բ)	Այլ համայնքներից ստացվող միջոցներ							
գ)	Այլ աղբյուրներից ստացվող պաշտ. ընթ. տրանսֆ.	28106,4		132000,0	132000,0	118000,0		
Բ.2.	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ	17092,0*	7235,0*	29500,0*	24692,0*	57000,0*	40000,0*	50000,0*
ա)	ՀՀ պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ							
բ)	Այլ համայնքներից ստացվող միջոցներ							
գ)	Վարչական բյուջեից (պահուստային ֆոնդից) ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներ	17092,0*	7235,0*	29500,0*	24692,0*	57000,0*	40000,0*	50000,0*
II.	ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓ. ՀԱՄԱՐ - ՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԱՆԱՎԱՐՏ ՇԻՆ. ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄԻՑ ԱՍԱՑՎՈՂ ՄՈՒՏ							

	ՔԵՐ							
III.	ՆԵՐԳՐԱՎԱԾ ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ							
IV.	ԲՅՈՒՋԵՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԱՐԵՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԸ	1808,1	20147,6	3043,3	3043,3	4335,2	3000,0	3000,0
	այդ թվում՝ վարչական բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից փոխանցումներ ֆոնդային բյուջե					1338,1		

*) Վարչական բյուջեից (պահուստային ֆոնդից) ֆոնդային բյուջե կատարվող հատկացումները չեն մտնում բյուջետային ընդհանուր եկամուտների մեջ

Հ/Հ	Ծրագրի, միջոցառման, աշխատանքի անվանումը	Չափի միավոր	Ծավալը	Ֆինանսական միջոցների անհրաժեշտ քանակը /հազ.դրամ/	Ֆինանսավորման աղբյուրները			Կատարման ժամկետները			Պատասխանատուն	Ծանոթություն
					համայնքի բյուջե	դոնոր կազմ.	այլ	2003	2004	2005		
1.	Համայնքի գլխավոր հատակագծի մշակում			1500,0	1500,0			500,0	1000,0		Ճարտ. և քաղաքաշին բաժ.	«Երևան-նախագիծ» ՊՓԲԸ
2.	Համայնքի տարածքի 1: 2000 մասշտաբի տոպոգրաֆիկ հանույթի ձեռքբերում	հատ	250	500,0	500,0			500,0			Ճարտ. և քաղաքաշին բաժ.	
3.	Անհատական բնակարանային շին. համար Գ-1 թաղամասում տնամերձերի աճուրդային վաճառքի կազմակերպում	հողակտոր	209					209			Ճարտ. և քաղաքաշին բաժ.	Երևանի քաղաքապետարան
4.	Համայնքի 4-րդ կարգի վթարային բնակելի շենքերի քանդում և բնակիչների վերաբնակեցում	շենք	8	600000,0			600000,0	4/ 300000,0	2/ 150000,0	2/ 150000,0	Երևանի քաղաքապետարան	Պետ. Բյուջե
5.	Համայնքի 3-րդ կարգի վթարային բնակելի շենքերի ամրացում	շենք	6	180000,0			180000,0	2/ 60000,0	2/ 60000,0	2/ 60000,0	«Աջափ. Շ և ՇՇ» ՓԲԸ	Պետ. Բյուջե
6.	Հալաբյան և Մարգարյան փող. հարակից հանգստի գոտու բարեկարգում	քմ	6000	51945,4	5194,5	46750,9		51945,4			Համայնքային ԾԻԳ	ՀՍԼՀ
7.	«Նորաշեն» թաղ. III շրջային հարակից բակային տարածքի բարեկարգում	հա	2,2	33160,0	30000,0	3160,0		18160,0	15000,0		ԿՏԲ և ԲՖՍ բաժին	ՀՊԾ «Սնունդ աշխատանքի դիմաց»
8.	Համայնքի հանրակրթ. դպրոցների հիմնական վերանորոգում	դպրոց	9	114600,0	5730,0	103014,0	5730,0	4/ 50900,0	5/ 63700,0		Դպրոցների ԾԻԳեր	ՀՍԼՀ
9.	Համայնքի թիվ 166 մ/մանկապարտեզի հիմն. վերանորոգում			55300,0	5530,0	49770,0			55300,0		Համայնք. նախաձեռնող խումբ	«Փրկեք երեխաներին»
10.	Համայնքի գիշերօթիկ կրթահամալիրի հիմն. վերանորոգում			18600,0	1860,0	16740,0			18600,0		Համայնք ԾԻԳ	ՀՍԼՀ

Հ/Հ	Ծրագրի, միջոցառման, աշխատանքի անվանումը	Չափի միավոր	Ծավալը	Ֆինանսական միջոցների անհրաժեշտ քանակը /հազ.դրամ/	Ֆինանսավորման աղբյուրները			Կատարման ժամկետները			Պատասխանատուն	Ծանոթություն
					համայնքի բյուջե	դոնոր կազմ.	այլ	2003	2004	2005		
11.	Բնակելի շենքերի հարթ տանիքների կապիտալ նորոգում	քմ	2000	12000,0	12000,0			520/ 3000,0	670/ 4000,0	810/ 5000,0	«Շ և ՇՇ» ՓԲԸ	
12.	Բնակելի շենքերի թեթևանջավոր տանիքների կապիտալ նորոգում	քմ	3900	9000,0	9000,0			900/ 2000,0	1300/ 3000,0	1700/ 4000,0	«Շ և ՇՇ» ՓԲԸ	
13.	Բնակելի շենքերի տանիքների ընթացիկ նորոգում	քմ	700	3200,0			3200,0	220/ 1000,0	240/ 1100,0	240/ 1100,0	«Շ և ՇՇ» ՓԲԸ	Կազմ.-ան միջոցներ
14.	Բնակելի շենքերի վերելակների կապիտալ նորոգում	վերելակ	42	18000,0	18000,0			12/ 5000,0	14/ 6000,0	16/ 7000,0	«Շ և ՇՇ» ՓԲԸ	
15.	Բնակելի շենքերի վերելակների ընթացիկ նորոգում	վերելակ	216	10800,0			10800,0	70/ 3500,0	72/ 3600,0	74/ 3700,0	«Շ և ՇՇ» ՓԲԸ	Կազմ.-ան միջոցներ
16.	Բնակելի շենքերի ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի նորոգում	զմ	2500	2500,0			2500,0	800/ 800,0	800/ 800,0	900/ 900,0	«Շ և ՇՇ» ՓԲԸ	Կազմ.-ան միջոցներ
17.	Բարձրահարկ բնակելի շենքերի երեսապատման սալիկների նորոգում	քմ	400	1000,0	1000,0			100/ 250,0	150/ 375,0	150/ 375,0	«Շ և ՇՇ» ՓԲԸ	
18.	Բնակելի շենքերի բակային տարածքների բարեկարգում	բակ	9	15000,0		12000,0	3000,0	3/ 5000,0	3/ 5000,0	3/ 5000,0	Համատիր. կորորհինացման բաժին	«Նպաստ աշխատանքի» դիմաց ծրագիր
19.	Բնակելի շենքերի ջրհորդան խողովակ. նորոգում, ջրամուտքերի դռների տեղադրում, ապակե պատման աշխատանքներ	շենք	60	3000,0			3000,0	20/ 1000,0	20/ 1000,0	20/ 1000,0	«Շ և ՇՇ» ՓԲԸ	Կազմ.-ան միջոցներ
	Համայնքի փողոցների և	հազ.									«Աջափնյա»	

20.	տարածքների սան. մաքրման աշխատանքներ	քմ	944,9	84500,0	84500,0			233,3/ 26000,0	258,3/ 28000,0	278,3/ 29000,0	կի սան-մաքրում» ՍՊԸ	
-----	-------------------------------------	----	-------	---------	---------	--	--	-------------------	-------------------	-------------------	---------------------	--

Գ/Գ	Ծրագրի, միջոցառման, աշխատանքի անվանումը	Չափի միավոր	Ծավալը	Ֆինանսական միջոցների անհրաժեշտ քանակը /հազ.դրամ/	Ֆինանսավորման աղբյուրները			Կատարման ժամկետները			Պատասխանատուն	Ծանոթություն
					համայնքի բյուջե	դոնոր կազմ.	այլ	2003	2004	2005		
21.	Աղբարկղների պատրաստում և տեղադրում	հատ	90	4500,0	4500,0			30/ 1500,0	30/ 1500,0	30/ 1500,0	«Աջափնյա-կի սանմաքրում» ՍՊԸ	
22.	Աղբատար ավտոմեքենաների ձեռքբերում	հատ	2	5000,0			5000,0		2/ 5000,0		«Աջափնյա-կի սանմաքրում» ՍՊԸ	Կազմ.-ան միջոցներ
23.	Կանաչ տարածքների խնամք և ոռոգում, ծառատունկ	հա	131,5	93000,0	93000,0			41,0/ 30000,0	44,5/ 31000,0	46,0/ 32000,0	«Արսերմի» ՍՊԸ	
24.	Ոռոգման նոր ջրագծերի անցկացում	գկմ	12,0	12000,0	12000,0			3,0/ 3000,0	4,0/ 4000,0	5,0/ 5000,0	«Արսերմի» ՍՊԸ	
25.	Համայնքի փողոցների արտաքին լուսավորության ցանցի շահագործում	գկմ	31,5	4500,0	4500,0			9,0/ 1000,0	10,5/ 1500,0	12,0/ 2000,0	ԿՏԲ և ԲՖՍ րաժին	«Երբաղ-լույս» պ/ ձ
26.	Արտաքին լուսավորության ցանցի վերականգնում	գկմ	7,5	11000,0	11000,0			3,5/ 5000,0	2,0/ 3000,0	2,0/ 3000,0	ԿՏԲ և ԲՖՍ րաժին	«Երբաղ-լույս» պ/ ձ
27.	Թափառող և կրծող կենդանիների վնասազերծում			1500,0	1500,0			500,0	500,0	500,0	ԿՏԲ և ԲՖՍ րաժին	
28.	Համայնքի փողոցների ասֆալտե ծածկերի, եզրաքարերի նորոգում	հազ.քմ	51,0	150000,0	150000,0			15,0/ 45000,0	17,0/ 50000,0	18,0/ 55000,0	ԿՏԲ և ԲՖՍ րաժին	
29.	Շաբաթօրյակների կազմակերպում			3700,0	3700,0			1000,0	1200,0	1500,0	ԿՏԲ և ԲՖՍ րաժին	
30.	Համայնքի ջեռուցման և գազաֆիկ. համակարգերի վերականգնման ներդրում			60000,0	60000,0			17500,0	20000,0	22500,0	ԿՏԲ և ԲՖՍ րաժին	«Հայրուսզա գարդի» և «Ջերմային տնտ.» ՊՓԲԸ հետ համատեղ

Գ/Գ	Ծրագրի, միջոցառման, աշխատանքի անվանումը	Չափի միավոր	Ծավալը	Ֆինանսական միջոցների անհրաժեշտ քանակը /հազ.դրամ/	Ֆինանսավորման աղբյուրները			Կատարման ժամկետները			Պատասխանատուն	Ծանոթություն
					համայնքի բյուջե	դոնոր կազմ.	այլ	2003	2004	2005		
31.	Համայնքի գյուղ. նշ. հողերի ոռոգման համակարգի վերականգնում	գկմ	32,0	156000,0	15600,0	140400,0			12,0/ 58500,0	20,0/ 97500,0	Գյուղ և ՇՄՊ բաժին	Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ
32.	Համայնքի տարածքում առևտրի և սպաս. չգործող ժամանակավոր օբյեկտների ապամոնտաժում	հատ	40	200,0	200,0			10/ 50,0	15/ 75,0	15/ 75,0	Առևտրի և սպաս. բաժին	
33.	Համայնքի մ/մանկապարտեզների վերանորոգում	հատ	12	30000,0	30000,0			4/ 10000,0	4/ 10000,0	4/ 10000,0	ԿՏԲ և ԲՖՍ բաժին	
34.	ԳԿՀ 3-րդ տացքակետի շենքի հարթ տանիքի վերանորոգում	քմ	600	3600,0	3600,0					600/ 3600,0	ԿՏԲ և ԲՖՍ բաժին	
35.	Հարդարման աշխատանքներ ՄՊՍԿ-ում			2800,0	2800,0					2800,0	ԿՏԲ և ԲՖՍ բաժին	
36.	Մարզադպրոցի շենքի վերանորոգում, հրապարակի բարեկարգում և պարսպապատում			6200,0	6200,0					6200,0	ԿՏԲ և ԲՖՍ բաժին	
37.	«Աջափնյակ» ԳԴԿ -ի համար գույքի ձեռքբերում			7000,0	7000,0				3000,0	4000,0	Կրթ., մշակույթի և սպորտի բաժին	
38.	Մշակութային, սպորտային միջոցառումների կազմակերպում	հատ	60	24000,0	24000,0			20/ 8000,0	20/ 8000,0	20/ 8000,0	Կրթ., մշակույթի և սպորտի բաժին	
39.	ՏԻ բնագավառի ՀԿ - ներին աջակցություն	կազմ.	4	1500,0	1500,0			4/ 500,0	4/ 500,0	4/ 500,0	Սոց.-տնտ. ծր. և արտ. կապերի բաժին	
40.	Համայնքի նյութապես կարիքավոր ընտանիքներին միանվագ օգնության կազմում, սոցիալական ապահ. միջ.-եր	ընտ.	2500	25000,0	25000,0			700/ 7000,0	800/ 8000,0	1000/ 10000,0	«Աջափնյակ» բա - րեգործ. ՀԿ	

Հ/Հ	Ծրագրի, միջոցառման, աշխատանքի անվանումը	Չափի միավոր	Ծավալը	Ֆինանսական միջոցների անհրաժեշտ քանակը /հազ. դրամ/	Ֆինանսավորման աղբյուրները			Կատարման ժամկետները			Պատասխանատուն	Ծանոթություն
					համայնքի բյուջե	դոնոր կազմ.	այլ	2003	2004	2005		
41.	«Գթության խոհանոց» բարեգործական ճաշարանի գործարկում	մարդ	300	7500,0	7500,0			300/2500,0	300/2500,0	300/2500,0	«Աջափնյակ» բարեգործ. ՀԿ	ԳԿԽ, ՀԿԽԸ հետ համատեղ
42.	Բարեգործական ճաշարանի գործարկում	մարդ	100	4500,0	4500,0			100/1500,0	100/1500,0	100/1500,0	«Աջափնյակ» բարեգործ. ՀԿ	ADRA կազմ.-ան հետ համատեղ
43.	Թաղապետարանում տեղեկատվական - վերլուծական կենտրոնի ստեղծում և շահագործում	միավոր	6 համակ., 2 տպիչ	3000,0	3000,0			1000,0	1000,0	1000,0	Սոց.-տնտ. ծր. և արտ. կապերի բաժին	ՀՖՄ, ՏՀԶՎԿ ՀԿ- երի հետ համատեղ
44.	Թաղապետարանում լրատվական կենտրոնի ստեղծում և շահագործում	միավոր	1 տեսախցիկ 1 ֆաքս, այլ սարք .	1500,0	1500,0			500,0	500,0	500,0	Քարտուղարություն և լրատվ. բաժին	
45.	Համայնքում ԱԻ և ՔՊ շուրջօրյա օպերատիվ հերթապահության կազմակերպում	հաստիք	4	3000,0	3000,0			4/1000,0	4/1000,0	4/1000,0	Աջափնյակի ԱԻ և ՔՊ բաժին	Երևանի ԱԻ և ՔՊ վարչություն
46.	Բնակչության ազդարարման միջոցների ձեռքբերում և տեղադրում	էլեկտրա շչակ U-40	10	2200,0	2200,0				5/1100,0	5/1100,0	Աջափնյակի ԱԻ և ՔՊ բաժին	Երևանի ԱԻ և ՔՊ վարչություն
47.	Համայնքի տարածքում վթարային վերամբարձ կռուներին ապամոնտաժում	հատ	12	12000,0		12000,0		4/4000,0	4/4000,0	4/4000,0	Աջափնյակի ԱԻ և ՔՊ բաժին	Երևանի վերամբարձ կռուներին վարչություն
48.	Ընկնելու վտանգ ներկայացնող բարդի տիպի ծառերի հատում	հատ	50	500,0	500,0			20/200,0	20/200,0	10/100,0	Աջափնյակի ԱԻ և ՔՊ բաժ.	
49.	Երևանի փրկարարական և վթարա - վերականգնողական միջհամայնքային միավորման գործունեության ապահովում	անդամավճար		6000,0	6000,0			2000,0	2000,0	2000,0	Ֆինանսական բաժին	
50.	Աջափնյակի ԱԻ և ՔՊ բաժնին գրասենյակային գույքով ապահովում	հազ. դր		300,0	300,0			100,0	100,0	100,0	Աջափնյակի ԱԻ և ՔՊ բաժին	
51.	Համայնքում ԱԻ և ՔՊ հրամա - նատարա-շտաբային ուսումնա վարժության կազմակերպում և անցկացում	վարժ.- ուն	2	1600,0	1600,0			-	1/800,0	1/800,0	Աջափնյակի ԱԻ և ՔՊ բաժ	Երևանի ԱԻ և ՔՊ վարչություն

**7. ՀԱՄԱՅՆՔԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԵՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ
ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

ՀՀ	Ցուցանիշներ	Չափի միավոր	2000թ. փաստ.	2001թ. փաստ.	2002թ. փաստ.	2003թ. կանխ.	2004թ. կանխ.	2005թ. կանխ.
1	2	3	4	5	6	7	8	9
1.	Համայնքի տարածքը	հա	2568	2568	2568	2568	2568	2568
2.	Բնակչության թիվը	հազ. մ.	125,8	126,0	126,0	125,9	125,85	125,8
3.	Աշխատանքային ռեսուրսները, այդ թվում՝	հազ. մ.	53,4	54,2	54,2	54,3	54,4	54,5
ա)	Զբաղվածները ըստ տնտեսության ճյուղերի ընդամենը, այդ թվում՝		41,2	41,4	41,6	41,8	42,1	42,5
	արդյունաբերություն		4,03	4,1	4,1	4,05	4,0	3,98
	շինարարություն		0,9	1,0	1,05	1,1	1,15	1,2
	գյուղատնտեսություն		0,37	0,4	0,4	0,37	0,35	0,32
	տրանսպորտ և կապ		0,25	0,27	0,3	0,31	0,33	0,35
	առևտուր, հասարակական սնունդ		1,0	1,1	1,2	1,25	1,3	1,35
	կրթություն, մշակույթ, արվեստ		4,0	3,95	4,0	4,05	4,1	4,15
	գիտություն և գիտական սպասարկում		1,9	1,8	1,8	1,75	1,7	1,7
	առողջապահութ., ֆիզկ. և սոց-ապի.		2,3	2,25	2,2	2,15	2,17	2,2
	բնակ. կոմունալ տնտեսություն		0,45	0,47	0,5	0,52	0,55	0,57
	այլ ճյուղեր և ոլորտներ		26,0	26,06	26,05	26,25	26,45	26,68
բ)	Արտադրությունից կտրված սովորող.		3,25	3,3	3,35	3,4	3,45	3,5
գ)	Տնային տնտեսություններում զբաղվ.		2,15	2,9	2,85	2,8	2,75	2,7
դ)	Գործազուրկների թիվը		6,8	6,6	6,4	6,3	6,1	5,8
ե)	Զբաղվածության կառուցվածքը ըստ սեփականության ձևերի		-	-	-	-	-	-
4.	Սան. մաքրման մեքենայական պարկի մեքենա -մեխանիզմների քանակը	հատ	28	26	24	24	26	26
5.	Սան. մաքրման մեքենայ. պարկի օգտ. գործ. գործակիցը	գործակից	0,55	0,617	0,64	0,66	0,68	0,7
6.	Մեք. պարկի տեխնիկական պատրաստականության օգտ. գ. գ.		0,7	0,75	0,8	0,82	0,84	0,85
7.	Ոռոգման ցանցի երկարությունը, այդ թվում՝	կմ	10,5	10,7	16,3	23,8	27,7	36,5
	Համայնքային նշանակության		4,1	4,2	9,6	16,6	20,3	29,0
	Քաղաքային նշանակության		6,4	6,5	6,7	7,2	7,4	7,5
8.	Ոռոգելի հողատարածություն, այդ թվում՝	հա	32,9	34,0	39,0	41,0	44,5	46,0
	համայնքային նշանակության		13,9	14,0	15,0	17,0	20,5	22,0
	քաղաքային նշանակության		19,0	20,0	24,0	24,0	24,0	24,0
9.	Ոռոգման ջրի ծավալը, այդ թվում՝	հազ.խմ	230,4	244,8	280,8	295,2	320,4	331,2

	Համայնքային նշանակության		93,6	100,8	120,8	130,2	150,4	156,2
	Քաղաքային նշանակության		136,8	144,0	160,0	165,0	170,0	175,0
10.	Մեկ բնակչին ընկն.կանաչ տարածքը	քմ	2,6	2,7	3,1	3,25	3,5	3,7
11.	Համայնքի փողոցների երկարութ., այդ թվում՝	կմ	55,5	55,5	56,4	56,4	56,4	56,5
	համայնքային նշանակության		39,2	39,2	39,7	39,7	39,7	39,8
	քաղաքային նշանակության	կմ	16,3	16,3	16,7	16,7	16,7	16,7
12.	ճանապարհային ցանցի մակերեսը, այդ թվում՝	հազ.քմ	983,2	983,2	987,0	989,0	989,3	990,0
	համայնքային նշանակության		613,2	613,2	615,0	616,0	616,3	617,0
	քաղաքային նշանակության		370,0	370,0	372,0	373,0	373,0	373,0
13.	Սպառողներ կողմից իրացվող ջրի քանակը	մլն.խմ	12,5	12,7	12,9	13,0	13,1	13,2
14.	Ջրահեռացման ծավալը	մլն.խմ	-	-	-	-	-	-
15.	Ջրի կորուստները ցանցում	%	52	53	45	40	35	30
16.	Ջեռուցվող բնակ մակեր.	հազ.քմ	-	-	-	-	-	-
17.	Առևտրի և սպասարկումների օբյեկտների թիվը, այդ թվում՝	հատ	362	353	367	363	358	353
	առևտրի օբյեկտներ		325	335	340	340	335	330
	ժ. 23-ից հետո աշխատող օբյեկտներ		2	2	2	3	4	5
	բենզինի լիցքակայաններ		29	19	18	17	16	15
	գազի լիցքավորման կետեր		6	7	7	3	3	3
18.	Էլ.էներգիայի սպառումը, այդ թվում՝	մլն.կ/ժ	225,0	230,0	230,0	232,0	233,0	235,0
	բնակչության կողմից		160,0	162,5	162,5	163,0	164,0	165,0
19.	Պահուստային հողեր	հա	852,0	852,0	852,0	852,0	852,0	852,0
20.	Պահուստ. հողերի օգտ. մակարդակը	%	25	30	33	35	37	40
21.	Բնակֆոնդի ընդհ./ բնակելի մակերեսը, այդ թվում՝	հազ.քմ	1271,0/ 629,5	1271,0 / 630,0	1271,0/ 630,0	1100,0/ 628,0	1043,0/ 625,0	1030,0 / 620,0
	պետական բնակելի		20,0	15,0	14,0	12,0	9,0	4,0
	սեփականաշնորհված բնակելի		609,5	615,0	616,0	616,0	616,0	616,0
22.	Բնակարանի կարիքավ. ընտ. թիվը	ընտ.	750	750	770	800	830	850
23.	Տեղափոխվող աղբի քանակը, այդ թվում՝	տոննա	32,5	33,3	35,0	36,0	37,0	38,0
	բնակչությունից		25,0	26,0	27,0	27,5	28,3	29,0
24.	Նախադպրոցական հիմնարկ. թիվը	հատ	21	19	17	17	16	16
	Տարածքը	հազ.քմ	222,0	200,0	180,0	180,0	175,0	175,0
	Երեխաների թիվը	մարդ	2630	2540	2500	2500	2450	2480
	Խմբերի թիվը	խումբ	140	123	120	120	115	118
25.	Սովորողների թիվը ցերեկային հանրակրթական դպրոցներում	հազ. մարդ	16,5	13,55	13,5	13,5	13,6	13,7
26.	Արտադպրոցական հիմն. թիվը	հատ	1	1	1	1	1	1
27.	Արտադպր. հիմն. ընդգրկված թիվը	մարդ	430	420	425	430	440	450
28.	Երաժշտ.դպրոցների սովորող. թիվը	մարդ	1142	1100	1060	1050	1080	1100
29.	Մշ. տներում խմբ.մեջ ընդգրկվ. թիվը	մարդ	550	500	1150	1170	1200	1250
30.	Մարզադպրոցներում ընդգրկված երեխաների թիվը	մարդ	370	360	350	360	380	400
31.	Հիվանդանոցների թիվը	հատ	4	5	5	5	5	5
32.	Հիվանդանոցային մահճակ. թիվը	հատ	1400	1410	1350	1300	1200	1390
33.	Բժշկական անձնակազմի թիվը	մարդ	600	590	570	560	550	530
34.	1000 բնակչ. ընկնող բժիշկ. թիվը	մարդ	2	2	2	2	2	2
35.	Պոլիկլ.-ամբուլատ. թիվը	հատ	2	2	1	1	1	2
36.	Ամբուլատ -պոլիկլ.հիմն-ի հզորությունը	այց/հերթ	1100	1100	1000	950	900	850

37.	Համայնքում մահացությունը	մարդ	800	805	800	790	780	770
38.	Ծնունդը		850	845	850	860	870	880
39.	Ծննդատների մահճակալների թիվը	հատ	110	110	110	105	100	100
40.	Անապահով ընտանիքների թիվը		8000	8100	8100	8050	8000	7900
41.	Թոշակառուների թիվը	հազ.մ.	22,6	22,5	22,4	22,4	22,3	22,3
42.	Փախստականների թիվը		2,1	2,0	2,0	1,9	1,8	1,7
43.	«Փարոս» համակարգից օգտվող ընտան.թիվը	հազ.ընտ.	6,8	6,9	4,3	4,2	4,1	4,0
44.	Բնակչության մեկ շնչին ընկնող բյուջետային եկամուտը	հազ.դր.	3,0	3,5	4,7	4,8	4,9	5,0
45.	Սեփական եկամուտների բաժինը համայնքի բյուջեի եկամուտ. մեջ	%	50	44	45	47	50	47
46.	Կապ. ծախսումների տեսակարար կշիռը բյուջետային ծախսումների մեջ	%	5	5	6	7	8	10
	այդ թվում՝ սեփական ներգրավված միջոցների հաշվին		4	4	5	5	6	7

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

ՀՀ	Ցուցանիշների անվանումը	Չափի միավոր	2000թ. փաստ.	2001թ. փաստ.	2002թ. փաստ.	2003թ. կանխ.	2004թ. կանխ.	2005թ. կանխ.
1.	Բնակելի շենքերի ընդհանուր թիվը	շենք	411	411	411	407	404	400
	Ընդհանուր և բնակ. մակերեսները , այդ թվում՝	հազ.քմ	1271,0/ 629,5	1271,0/ 630	1271,0/ 630	1100,0/ 628,0	1043,0/ 625,0	1030,0/ 620,0
ա/	կոոպերատիվ	շենք/ հազ.քմ	33/ 176	33/ 176	33/ 176	33/ 176	33/ 176	33/ 176
բ/	Շ և ՇՇ ՓԲԸ տնտեսությունում, այդ թվում՝	- // -	117/ 356/263	117/ 356/263	117/ 356/263	113/ 344/185	110/ 335/180	106/ 323/138
	վթարային IV կարգի շենքեր - ռում	- // -	27 67/45	27 67/45	27 67/45	25 62/42	23 58/39	21 54/36
գ/	համատիրություններում	- // -	258 730/505	249 705/490	249 705/490	252 715/500	255 720/503	258 730/505
2.	Բնակարանների թիվը, այդ թվում՝	բնակարան	18717	18717	18717	18550	18390	18230
	Շ և ՇՇ ՓԲԸ տնտեսությունում, այդ թվում՝	- // -	7216	7216	7216	7050	6890	6730
	վթարային IV կարգի շենքեր	- // -	1144	1144	1144	977	817	657
Բ.	սեփականաշնորհված բնակարան.	- // -	16500	16900	17106	17300	17400	17500
Գ.	Համատիրություններում, այդ թվում՝	- // -	10564	10204	10204	10300	10400	10564
	պետական	- // -	400	280	280	250	270	300
	սեփականաշնորհված	- // -	10164	9924	9924	10050	10130	10264
3.	Վթարային շենքերի թիվը, այդ թվում՝	շենք	127	127	127	125	123	121
	I կարգի վթարային շենքեր	- // -	73	73	73	73	73	73
	II կարգի վթարային շենքեր	- // -	27	27	27	27	27	27
	III կարգի վթարային շենքեր	- // -	27	27	27	25	23	21

4.	Վերելակային տնտեսություն	- // -						
	Վերելակով շենքերի թիվը	շենք	148	148	148	148	148	148
	Վերելակների ընդհանուր թիվը	հատ	300	300	300	300	300	300
	Գործող վերելակների թիվը	- // -	190	197	193	197	200	204
Ա.	Շ և ՇՇ ՓԲԸ տնտեսությունում, այդ թվում՝	շենք վեր/գոր ծ. վ.	61 131/92	63 135/95	65 137/97	65 137/99	63 135/98	61 131/95
Բ.	համատիրություններում	- // -	61 129/82	61 137/82	61 137/94	61 137/96	63 140/100	65 143/102
Գ.	կոոպերատիվ շենքերում	- // -	26 40/30	26 40/30	26 40/32	26 40/33	26 40/34	26 40/35
5.	ավտոտնակների թիվը	հատ	4200	4500	5000	5050	5100	5150
	Վարձավճարի ծավալը	հազ.դր.	9500.0	9604.6	10500.0	13000.0	15000.0	18000.0
6.	Ոչ բնակելի տարածքներում տեղադրված օբյեկտների քանակը և մակերեսը	հատ հազ.քմ.	294 33.8	297 33.8	220 25.5	150 15.0	100 10.0	50 5.0
	Վարձավճարի ծավալը	հազ.դր.	3400.0	1647.2	150.0	250.0	150.0	100.0

ԵԶՐԱՓՈՒԿՈՒՄ

Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման եռամյա ծրագիրը հիմք է հանդիսանալու համայնքի տարեկան ծրագրերի և բյուջեների մշակման և կատարման աշխատանքները կազմակերպելիս:

Ելնելով Աջափնյակի սոցիալ-տնտեսական զարգացման եռամյա ծրագրի ռազմավարությունից և ընդհանուր նպատակներից, շատ կարևոր է սեփական եկամուտների լրացուցիչ աղբյուրներ գտնելը, ֆինանսական միջոցների արդյունավետ հավաքագրման կազմակերպումն ու նպատակային օգտագործումը: 2003-05թթ. համայնքային բյուջեները պետք է մշակել որպես զարգացման, ծրագրային բյուջեներ, որոնցով հնարավոր կլինի իրականացնել ինչպես ընթացիկ և հիմնական վերանորոգման աշխատանքներ, այնպես էլ սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր ծրագրեր:

Թաղապետարանի բաժինները և ծառայությունները կմշակեն իրենց բնագավառի զարգացման կոնկրետ ծրագրեր, որոնք կարելի է ներկայացնել ՀՀ կառավարություն, Երևանի քաղաքապետարան, լրացուցիչ ներդրումներ հայթայթելու նպատակով նախատեսվում է փնտրել ինվեստիցիաների նոր աղբյուրներ, ներգրավել գործարարների սեփական միջոցները, տարբեր սոցիալական հիմնադրամների ներդրումները:

Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման եռամյա ծրագրի կազմման ներկայացված ձևը մշակվել է ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից մշակված մեթոդական ցուցումների համաձայն, Աջափնյակի թաղապետարանի և ամերիկյան USAID/ ICMA կազմակերպությունների «ՀՀ համայնքների ֆինանսների կառավարման արդիականացում» ծրագրի շրջանակներում համագործակցության արդյունքում:

Սոցիալ-տնտեսական ծրագրերի և արտաքին կապերի բաժնի պետ

Վ. Շահբազյան

Ց Ա Ն Կ

Երևան քաղաքի Աջափնյակ թաղային համայնքի
սեփականություն հանդիսացող գույքի

Մսուր - մանկապարտեզներ

Գիշերօթիկ կրթահամալիր

Ակունք (Սիլիկյան թաղամասում)

«Աջափնյակ» գեղագիտական դաստիարակության կենտրոն

Գեղարվեստի դպրոց

Միրզոյանի անվան թ. 5 երաժշտական դպրոց

Գաբրիելյանի անվան թ.12 երաժշտական դպրոց

Թ. 21 երաժշտական դպրոց

Գրադարանային կենտրոնացված համակարգ (3 մասնաճյուղով)

Մարզադպրոց

Մանկապատանեկան տեխնիկական ստեղծագործության կենտրոն

Կամերային նվագախումբ

Թաղապետարանի շենք

«Աջափնյակի Շ և ՇՇ» ՓԲԸ

Համայնքի բնակարանային ֆոնդ

Ներհամայնքային նշանակության ջրամատակարարման համակարգ

Ներհամայնքային նշանակության ջեռուցման համակարգ

Ներհամայնքային նշանակության ջերմամատակարարման համակարգ

Ներհամայնքային նշանակության ոռոգման համակարգ

Ներհամայնքային նշանակության ճանապարհներ և փողոցներ

21. Հուշարձաններ, կիսանդրի